

ԵՐԱԿՐՈՆԵԱ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱՇՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

14 ապրիլի

ՀՀ Նախագահին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Արմեն Սարգսյանին եւ առաջին տիկին Նունե Սարգսյանին:

Վեհափառ Հայրապետն իր շնորհավորանքները բերեց ՀՀ Նախագահին՝ երդմանակալության արարողության առիթով՝ վստահություն հայտնելով, որ պետական կառավարման ոլորտում Նրա հարուստ փորձառությունը պիտի լավագույնս ծառայեցվի երկրի առաջընթացին՝ արդարացնելով ժողովրդի սպասումները թե՛ հայրենիքում եւ թե՛ Սփյուռքում:

Նորին Սրբությունը հաստատեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը պիտի շարունակի գործադիր լինել հայրենի իշխանություններին ու ՀՀ Նախագահին՝ հայոց անկախ պետականության գործացման եւ առկա մարտահրավերների հաղթահարման գործում եւ կարելի կանի ի սեր եւ ի բարօրություն հայրենիքի ու ժողովրդի:

Վեհափառ Հայրապետը ՀՀ Նախագահ Արմեն Սարգսյանին մաղթեց, որ երկրի եւ ժողովրդի ապագայի վերաբերյալ Նրա տեսլականն ու իղծերն իրականություն դառնան:

Իր հերթին ՀՀ Նախագահ Արմեն Սարգսյանը շնորհակալություն հայտնեց Ամենայն

Հայոց Հայրապետին՝ բարեմաղթանքների համար: Պրն Արմեն Սարգսյանն ընդգծեց, որ ՀՀ Նախագահի պաշտոնը ստանձնել է՝ հավատ ունենալով ժողովրդի, հայրենիքի եւ Հայոց Եկեղեցու հանդեպ: Նա նաեւ կարեւորեց Եկեղեցու համախմբող դերակատարությունը:

Չրույցի ընթացքում Գարեգին Բ Հայրապետը եւ տիար Արմեն Սարգսյանը խոսեցին նաեւ զանազան ծրագրերի մասին:

Հանդիպումներ եւ արդյունավետ ծառայություն մարդկային ՀՀ Նախագահին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես կարեւորեց պատասխանատու բոլոր կառույցների միասնականությունը եւ համամտությունը մեր ժողովրդի ազգային շահերի շուրջ՝ այդ ոգու ամրապնդման գործում էական նկատելով ՀՀ Նախագահի առաքելությունը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արդյունավոր գի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը եւ Մայր Աթոռի լուսարարապետ Հովհան եպս Հակոբյանը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀՀ Նախագահին այցելեցին Մայր տաճար:

գտած վերջին օրերի իրադարձությունների կապակցությամբ:

Նորին Սրբությունը ցավով նշեց, որ երկխոսության ուղղված ջանքերը որեւիցե դրական արդյունք չապահովեցին, եւ ցուցարարների ու ոստիկանության միջեւ տեղի ունեցավ բախում: «Մենք հույս ունենք եւ աղոթում ենք, որ իրավիճակը շուտափույթ հանդարտվի, եւ վերականգնվի կյանքի բնականոն ընթացքը», - ասաց Հայոց Հայրապետը՝ հավելելով, որ Մայր Աթոռի կողմից եկեղեցականներ են ներգրավված այս գործընթացների մեջ՝ ջանքեր գործադրելով՝

կանխելու բախումները եւ դրանց ծանր հետեւանքները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Արցախի Նախագահի կողմից ընդգծվեց, որ անթույլատրելի են տեղ գտած երեւոյթները, որոնք խաթարում են ազգային միաբանությունը եւ այդպիսով վտանգում անվտանգությունը Արցախի եւ հայրենի սահմանների:

Արձանագրվեց, որ կենսական անհրաժեշտություն է երկրում ներքաղաքական կայունության պահպանումը եւ երկխոսության միջոցով խնդիրների հանգուցալուծումը:

26 ապրիլի

Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության Նախագահներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմեն Սարգսյանին եւ Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանին:

Հանդիպմանը մասնակցում էին Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսները, հայաստանյան թեմերի առաջնորդները եւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները:

Նորին Սրբությունը հոգեւոր դասի անունից մտահոգություն հայտնեց հայրենի երկրում տեղ գտած քաղաքական զարգացումների հետեւանքով ստեղծված իրավիճակի կապակցությամբ: Վեհափառ Հայրապետը կարեւորեց, որ քաղաքական գործընթացները լինեն անցնում եւ օրինականության շրջանակներում, եւ հույս հայտնեց, որ համընդհանուր ջանքերով, երկ-

խոսության միջոցով քաղաքական ճգնաժամը հանգուցալուծման պիտի առաջնորդվի՝ նկատի առնելով ազգային շահերը, ի մասնավորի՝ Արցախի ժողովրդի ապահով ու անվտանգ կյանքն ու հայոց պետականության անսասանությունը:

Առկա իրավիճակի եւ դրա հաղթահարման ուղիների վերաբերյալ լուսաբանություններ տվեցին Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության Նախագահները, պատասխանեցին հոգեւոր դասի հարցումներին:

Չրույցի ընթացքում կարեւորվեց հայրենիքում ներքաղաքական կայունության ապահովումը եւ գործընթացների իրականացման ճանապարհին օրենքի եւ սահմանադրության անխաթար պահպանումը:

22 ապրիլի

Արցախի Նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանին:



Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Արցախի Հանրապետության Նախագահին իրենց մտահոգությունն արտահայտեցին Երեւանում տեղ

Ֆինլանդիայի Միկկելե Բաղաֆի Եղիսկոմոսին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու Միկկելե Բաղաֆի եպիսկոպոս Սեպպո Հեկկի-Նեին եւ վերապատվելի Տիմո Ռոսկվիստին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը վստա-

հույթուն հայտնեց, որ փոխադարձ այցելությունների շնորհիվ վերջին տասը տարիների ընթացքում ձեւավորված երկու Եկեղեցիների ջերմ հարաբերությունները կշարունակվեն զարգանալ ու առավել ամրապնդվել: *Շարունակությունը՝ էջ 2*

Ֆինլանդիայի Միկկելե Բաղաֆի Եռիսկոդոսին

Սկիզբը՝ Էջ 1

Իր հերթին Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու եպիսկոպոս Սեպպո Յեկկինեն շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին Մայր Աթոռում ցուցաբերված ջերմ հյուրընկալության համար՝ ներկայացնելով Հայաստանի սրբավայրեր կատարած իր այցելություններից ստացած տպավորությունները:

Լյութերական Եկեղեցու եպիսկոպոսը վստահեցրեց Նորին Սրբությանը, որ Հայաստանի

ներքաղաքական կյանքում տեղ գտած վերջին զարգացումների այս օրերին աղոթակից են հայ ժողովրդին ու Հայոց Եկեղեցուն: Չունցակից-ներն անդրադարձան նաեւ Եկեղեցիների առջեւ ծառացած զանազան մարտահրավերներին եւ դրանց հաղթահարման ուղիներին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե Ծ. վրդ. Անսկյանը:

27 ապրիլի

Ֆրանսիայից ժամանած աշակերտներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մարսելի համազգային դպրոցի եւ Փարիզի դպրոցատեղի միության վարժարանի թվով 45 աշակերտի՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի բարերար Սարգիս Պետոյանի եւ կրթական հաստատությունների տնօրենների:

Հանդիպմանը պրն Սարգիս Պետոյանը նախ ներկայացրեց սաներին, խոսեց հայրենիքից ստացած կրանց անջնջելի տպավորությունների, ապա նաեւ Սփյուռքում հայապահպանության արդի հրամայականների մասին:

Հայրապետական իր օրինությունը բաշխելով ներկա հայորդիներին՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ Նշեց, որ հաճելի է տեսնել, թե ինչպես են ամեն տարի Ֆրանսիայի ազգային կրթական հաստատությունների սաները ժամանում Հայաստան՝ մասնավորաբար մասնակիցը դառնալու ապրիլի 24-ին դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքն ուղղվող երթին՝ իրենց խոնարհումն ու հարգանքը բերելով Հայոց ցեղասպանության

սրբադասված նահատակների հիշատակին:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ վերջին օրերին հայրենիքի կյանքում տեղ գտնող իրադարձություններին, ինչպես նաեւ համերաշխության եւ խաղաղության, հանդուրժողականության եւ սիրո մթնոլորտի վերականգնմանն ուղղված Հայոց Եկեղեցու ջանքերին:

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը փոխանցեց աշակերտների ծնողներին այն նախանձախնդրության եւ հետեւողականության համար, որ ցուցաբերում են իրենց զավակների հայեցի դաստիարակության գործում, որպեսզի վերջիններս լինեն նախնայաց արժանավոր հետնորդները՝ իրենց գործերով պահպանելով ու ամրապնդելով բարի անունը հայ ժողովրդի:

Վերջում իրենց ասմունքով եւ ՀՀ պետական օրհներգի կատարմամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հաճելի անակնկալ մատուցեցին նաեւ աշակերտները:

29 ապրիլի

Հայաստանի Հանրապետական Կուսակցության ներկայացուցիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱԺ «ՀՀ» խմբակցության ղեկավար Վահրամ Բաղդասարյանին, ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Վիգեն Սարգսյանին եւ ՀՀ փոխնախարար

գահ, ԱԺ պատգամավոր Արմեն Աշոտյանին:

Հանդիպման ընթացքում քննարկեցին Հայաստանի ներքաղաքական իրավիճակը եւ դրա խաղաղ հանգուցալուծմանն ուղիները:

30 ապրիլի

Հալլե-Վիթենբերգի համալսարանի ղաավիրականությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Մարտին Լյութերի անվան Հալլե-Վիթենբերգի համալսարանի պատվիրակությանը՝ գլխավորությամբ համալսարանի ղեկավար պրոֆեսոր Ուդո Շտրատերի եւ ուղեկցությամբ Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի հեռանկարային ուսումնասիրությունների եւ նախաձեռնությունների կետրոնի գիտական ղեկավար Տիգրան Թորոսյանի:

այդ համագործակցության ծեսավորման գործում իր անուրանալի ավանդը ունի Հալլե քաղաքի հայկական համայնքը:

Չորուցի ընթացքում Գարեգին Բ Հայրապետը ողջունեց երկու կրթական հաստատությունների միջեւ սկզբնավորվող գործակցությունը՝ հույս հայտնելով, որ այն իր արդյունավետությամբ առավել կնապաստի երկու ժողովուրդների կապերի ամրապնդմանն ու զարգացմանը:

Հալլե-Վիթենբերգի համալսարանի ղեկավար



Հանդիպման սկզբում պրն Թորոսյանը Նորին Սրբությանը ներկայացրեց Հալլեի համալսարանի պատվիրակության անդամներին, ապա խոսեց Պետական լեզվաբանական համալսարանի հետ նախնաշվող համագործակցության հեռանկարների մասին:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը, ողջունելով Հալլե-Վիթենբերգի համալսարանի պատվիրակության այցը Հայաստան, գոհունակությամբ արձանագրեց, որ Մայր Աթոռի ու համալսարանի միջեւ առկա է բազմամյա սերտ համագործակցություն: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց համալսարանի ղեկավարին՝ Մայր Աթոռի միաբաններին եւ առհասարակ հայ երիտասարդներին համալսարանում ուսանելու հնարավորություն ընձեռելու համար: Նորին Սրբությունն ընդգծեց նաեւ, որ

պրոֆեսոր Ուդո Շտրատերը եւս ողջունեց երկու համալսարանների միջեւ հաստատվող կապերը՝ կարեւորելով դրանք մշակութային փոխճանաչողության առումով:

Չորուցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանի ներքաղաքական իրավիճակին: Այս առնչությամբ Նորին Սրբությունը տեղեկություններ փոխանցեց առկա կացության վերաբերյալ՝ ներկայացնելով քաղաքական ուժերի միջեւ երկխոսության սկզբնավորման մասին, ինչպես նաեւ խաղաղության ու համերաշխության մթնոլորտի վերականգնմանն ուղղված ջանքերը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՋ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՌԻՂԵՐՁԸ (19 ապրիլի)

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Մեր երկրի ու ժողովրդի ներքին կյանքը վերջին օրերին ուղեկցվում է բուռն ու լարված իրադարձություններով՝ կապված Հայաստանի Հանրապետության վարչապետի ընտրության հետ:

Մեր մտահոգությունն ենք հայտնում ստեղծված իրավիճակի առնչությամբ, որ խաթարում է հանրային բնականոն կյանքի ընթացքը: Յուրաքանչյուր հայորդի, հայրենիքի հանդեպ սիրուց մղված, ունի իր տեսլականը, որի վերաբերյալ իր մոտեցումներն ու ընկալումները կարող է արտահայտել օրինական միջոցներով՝ ազատորեն իրացնելով իր քաղաքացիական իրավունքները: Սակայն դա երբեք չի ենթադրում սիրո եւ ողջամտության նահանջ, այլոց իրավունքների ոտնահարում, առավել եւս՝ մարդկանց կյանքի վտանգում: Մեր ժողովրդի եւ մեր Սուրբ Եկեղեցու զավակներն են եւ ցուցարարների, եւ իրավապահների շարքերում: Անընդունելի եւ անթույլատրելի են ատելության եւ թշնամանքի հրահրումը եւ որեւէ տեսակի ընդհարում ու բռնության գործադրում:

Հորդոր ենք ուղղում Մեր ժողովրդի զավակներին՝ կոչ անելով պահպանելու զգաստությունն ու ողջախոհությունը, հայրենասիրության մեջ օրինահարգությունը եւ խաղաղության նախանձախնդրությունը՝ ցուցաբերելով միմյանց հանդեպ հարգանք եւ ներդաժանություն: Հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերները հաղթահարելի են սոսկ, երբ առկա է համերաշխություն, փոխհասկացողություն, համընդհանուր պատասխանատվություն եւ միասնություն: Մեր երկիրն այսօր պահանջն ունի այս ոգու դրսևորման:

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ հայցելով Տիրոջ իմաստությունը եւ Սուրբ Հոգու առաջնորդությունը մեզ ամենքիս:

«Միաբան եղեք, խաղաղություն արեք, եւ խաղաղության ու սիրո Աստվածը թող լինի ձեզ հետ» (Բ Կորնթ. 13. 11):

Գերագույն հոգեւոր խորհրդի եւ եպիսկոպոսաց դասի ուղերձը՝ վերջին իրադարձությունների առիթով (22 ապրիլի)

Մեր երկրում տեղ գտած վերջին զարգացումները ներազգային կյանքում ստեղծել են վտանգավոր ու տագնապալի իրավիճակ:

Ներկա կացության մեջ հարկ է առաջնորդվել սթափ դատողությամբ՝ զերծ ծայրահեղ հուզականությունից ու չարդարացված առավելապաշտական նկրտումներից:

Կոչ ենք ուղղում իրավապահներին ու ցուցարարներին գործել բացառապես օրինականության սահմաններում, երկուստեք դրսևորել խիստ զգալիություն, բացառել հնարավոր սարքանքներ եւ զերծ մնալ բախումների ու ընդհարումների հանգեցնող գործողություններից: Անթույլատրելի են աններելի են քայլերն ու գործողությունները, որոնք խաթարում են ազգային միաբանությունը, սերմանում երկպառակություն, ատելություն ու թշնամանք:

Այսօր երկխոսության հույսեր արթնացնող անսխադեպ նախաձեռնությունը, ցավոք, ընդհատվեց: Մենք հավատում ենք, որ խաղաղ ճանապարհով առկա վիճակը հաղթահարելու բոլոր հնարավորությունները դեռ չեն սպառվել: Ակնկալում ենք, որ հայրենիքի ապագայով մտահոգ բոլոր քաղաքական ու քաղաքացիական ուժերն իրենց հետեւողական ու ծանրակշիռ գործունեությամբ կմիջամտեն զարգացումներին եւ կփորձեն բանակցությունների, փոխհասկացողության ճանապարհով աջակցել խնդիրների բարվոք հանգուցալուծմանը:

Առ Աստված աղոթքով հայցում ենք, որ հարուցյալ Տերը խաղաղ, ան-




սասան եւ անվրդով պահի հայրենի մեր երկիրը եւ զորացնի բարեպաշտ մեր ժողովրդի համերաշխության, հանդուրժողականության եւ ազգային միաբանության ոգին, Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրը դարձնելու աղոթքի եւ հաշտության օր:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՋ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՌԻՂԵՐՁԸ (1 մայիսի)

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Այսօր Ազգային ժողովում ՀՀ վարչապետի ընտրության հարցում



հնարավոր չէղավ հանգել միասնական որոշման: Երկրում իրադրությունը շարունակում է մնալ լարված եւ մտահոգիչ:

Հորդորում ենք իշխանություններին եւ ընդդիմությանը գործել օրինականության շրջանակներում, հարցերի կարգավորումները գտնել համախոհության ու փոխհասկացողության մեջ՝ զերծ պահելով մեր ժողովրդին բախումալային իրավիճակներից:

Կոչ ենք ուղղում խորհրդարանական բոլոր խմբակցություններին՝ բանակցությունների միջոցով շարունակել ջանքեր գործադրել ստեղծված կացության հաղթահարման համար:

Մեր հորդորն ու խնդրանքն է Մեր ժողովրդի սիրելի զավակներին՝ պահպանել համերաշխությունը, զգուշությունը, չտրվել սարդանքների: Թույլ չտանք, որ մեզանում գլուխ բարձրացնեն ատելությունն ու թշնամանքը, որպեսզի առկա իրադրությունը հանգուցալուծվի ողջամտությամբ, սիրո եւ փոխըմբռնման ոգով:

Աղոթում ենք մեր հայրենիքի խաղաղության, Մեր ժողովրդի ապահով ու անվտանգ կյանքի համար:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՊՐԻԼԻ 24-Ի՝ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻՌՈՎ



Միրելի՝ Մեր զավակներ, Հաղթ հիշատակի օրն է Հայոց ցեղասպանության մեր սուրբ նահատակների: Ազգովի վերստին մեր խոնարհումը պիտի բերենք Հայոց ցեղասպանության սուրբ նահատակներին, ովքեր իրենց կյանքն ընծայեցին հանուն հավատքի եւ հայրենիքի:

Ապրիլի 24-ը յուրաքանչյուրիս համար սրբազան օր է, նվիրագործված օր, երբ Ծիծեռնակաբերդի բարձունքում, եկեղեցիներում եւ Հայոց ցեղասպանության հուշակոթողների առջեւ համազգային համախմբվածությամբ հարգանքի տուրք ենք մատուցում մեր սուրբ նահատակներին:

Միրելի՛ հայրդիներ, Մեր հորդորն ենք բերում ձեզ՝ մեր ժողովրդի համար նվիրական այս օրը լինել առավել սիրով ու համերաշխ, ամենուր միաբան ու միասիրտ աղոթք բարձրացնել եւ հայցել մեր սուրբ նահատակների բարեխոսությունն առ Աստված՝ առաջնորդելու մեր կյանքը խաղաղության, ապահովության եւ առաջընթացի ճանապարհներով:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, ողորմությունն ու շնորհները լինեն մեզ բոլորիս հետ. ամեն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց բուժումից վերադարձած զինվորականին

Ապրիլի 13-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց մայոր Սարգիս Ստեփանյանին, ով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Նախաձեռնությամբ եւ Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության աջակցությամբ ամիսներ առաջ մեկնել էր Հնդկաստան՝ ստանալու վերջույթների պրոթեզավորման համար անհրաժեշտ բուժումը:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը, հնդկահայոց հոգեւոր հովիվ Մովսէս աբեղա Սարգսյանը, Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության փոխատենապետեր տիար Սունիլ Սոթթին եւ տիկին Սյուզան Ռուբենը:

Վրթանես սրբազանը Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց, որ սպան, Նորին Սրբուխան օրհնությամբ ամիսներ առաջ մեկնելով Հնդկաստան, ստացել է անհրաժեշտ բուժում եւ օրեր առաջ վերադառնալով հայրենիք՝ պիտի շարունակի իր ծառայությունը:

Մայր Սարգիս Ստեփանյանը խորին շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Կալկաթայի Ս. Նազարեթ եկե-

ղեցու վարչության անդամներին՝ իր բուժումն ու ապաքինումը Հնդկաստանում կազմակերպելու եւ իրեն, ընտանիքով հանդերձ, Կալկաթայի Մարդասիրական ճեմարանում այս ժամանակահատվածում ջերմորեն հյուրընկալելու համար: Չինվորականը վստահեցրեց, որ այս Նախաձեռնության շնորհիվ ինքը վերստին հնարավորություն է ստացել շարունակելու իր պարտականությունների իրագործումը:

Այնուհետեւ Նորին Սրբությունը, իր օրհնությունը բերելով հայրենյաց պաշտպանին, հետաքրքրվեց նրա առողջական վիճակով եւ բուժման ընթացքով, ապա իր գնահատանքը հայտնեց հնդկահայոց հոգեւոր հովիվին եւ Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու վարչության անդամներին՝ նման հայրենակներ գործունեության համար: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ Մայր Աթոռն այսուհետ եւս կշարունակի այս Նախաձեռնությունը՝ աջակցելով մարտական գործողություններում վիրավորում ստացած զինվորների բուժման գործին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթք բարձրացրեց առ Աստված՝ հայրենիքի խաղաղ ու անվտանգ կյանքի համար:



Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների ոգեկոչման արարողությունները Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Ապրիլի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի միաբանների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Նախագահությամբ Վեհափառ Հայրապետի եւ ներկայությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմեն Սարգսյանի, Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանի, ՀՀ ԱԺ Նախագահ Արա Բաբլյանի, ՀՀ վարչապետի պաշտոնակատար Կարեն Կարապետյանի՝ կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիած-



նում մատուցվեց Պատարագ: Այս առիթով հավատացելոց խոնարհումի համար դուրս եր բերվել սուրբ Նահատակաց մատուցարանը:

Պատարագին Էր Մայր Աթոռի միաբան Առնե վրդ. Շահեսլյանը: Սր-

բազան արարողության ընթացքում հայր սուրբն անդրադարձավ օրվա խորհրդին՝ մասնավորաբար նշելով. «Հայ ժողովուրդն աշխարհի այն ժողովուրդներից է, որ ենթարկվել է ցեղասպանության եւ բնաջնջումի...

Սակայն մենք կանք եւ այսօր միաթարված ենք, որովհետեւ մեր Նահատակներն արժանացան սրբադասման, երկնավոր սրբերի թագերին եւ այսօր երկնքում մեզ համար բարեխոսներ են»:

Հայր Առնե ընդգծեց, որ հայ ժողովուրդը պետք է այսօր շարունակի հիշել իր Նահատակներին եւ պահանջի, որ նման չարիք՝ ցեղասպանություն, տեղ չգտնի ոչ մի ազգի կյանքում:

Սուրբ Պատարագի ավարտին Մայր տաճարի շրջափակում՝ Աղոթքի եւ ուխտի խաչքարի առջեւ, հանդիսապետությամբ Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց բարեխոսական կարգ:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Մայր Աթոռի բարերարներ Գաբրիել Չմբերջյան եւ Սարգիս Պետոյանը, ինչպես նաեւ՝ Մարսելի համազգային դպրոցի եւ Փարիզի դպրոցաւեր միության վարժարանի աշակերտները:

Տ. ԶԱԲԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐՈՎՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ԲԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՆԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻՆ

(15 ապրիլի, 2018 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Եթե մեկը ջրից եւ Հոգուց չծնվի, ապա չի կարող Աստծո արքայությունը մտնել»:

(Հովհ. Գ 5)

Հարության հավատքով գորացած, սիրելի՛ հավատացյալներ, արեւաշող, գարնանաբույր, ուրախարար եւ նոր հույսերով լեցուն այս օրերին ուղղադավան մեր եկեղեցում կրկին հնչում է Տիրոջ հրաշափառ հարության ավետիսը՝ կոչ անելով ամենքիս հոգեւոր արթնության եւ վերանորոգության: Ս. Հարությունն ինչ-որ ժամանակ կատարված ոսկ պատմական իրադարձությունն է, այլ ամենօրյա եւ կենդանի իրականություն, որի վրա են հիմնված Զրիստոսի եկեղեցին եւ նրա վարդապետությունը: Հետեւաբար, քրիստոնյան պետք է ապրի իր կյանքը՝ այն իմաստավորելով հարության հավատքով, հույսով եւ այն անխախտ համոզմամբ, որ օրերից մեկում հարություն պիտի առնի Տիրոջ նման եւ երկնքի արքայությունը ժառանգի: Եվ Հիմանց այս շրջանում եկեղեցին մեզ մշտապես եւ հետեւողականորեն հիշեցնում է Ս. Հարության խորհրդի կարեւորության մասին, իսկ գուճագեղ կիրակիները հրաշալի առիթ են մեր կյանքի, Աստծո մարդեղության եւ Զրիստոսով փրկության մասին խորհելու համար:

Առաքելական մեր Սուրբ եկեղեցու տոնացույցի համաձայն՝ Ս. Չատկին հաջորդող երրորդ կիրակին կոչվում է Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակի: Այն մեզ մտովի տանում է առաքելական շրջան, երբ Երուսաղեմի Վերնատան մեջ առաքյալների կողմից հիմնվեց աշխարհի առաջին մատուռը՝ եկեղեցին: Նույն այս Վերնատան մեջ Հիսուսը Վերջին ընթրիքի ժամանակ հաստատեց Ս. Հաղորդության կենդանարար խորհուրդը, առանց որի իմաստագուրկ եւ քրիստոնյա չկան: Քրիստոսն ասում է. «Ով ուտում է իմ մարմինը եւ ըմպում իմ արյունը, հավիտենական կյանք ունի» (Հովհ. 2 55): Ուրեմն ինչքա՛ն կարեւոր է այս խորհուրդը մեզ համար, քանզի մեր բերանով ճաշակում ենք հենց Քրիստոսին՝ մեր Տիրոջն ու Փրկչին: Վերնատունը նաեւ այն վայրն էր, երբ Հոգեգալստին Ս. Հո-

գին կրակե լեզուների տեսքով իջավ առաքյալների վրա, որից հետո նրանք առանց երկմտելու արիաբար գնացին եւ տարածեցին Ս. Ավետարանն ամբողջ աշխարհում: Այս տոնն ասես մեզ կապում է Տիրոջ առաքյալների եւ առաջին քրիստոնյաների հետ, որոնք «հարատեւում էին առաքյալների ուսուցման, հաղորդության, հացի բեկման եւ աղոթքների մեջ» (Գործք Բ 42): Իսկ տոնին տրված «Կանաչ» մակդիրը Զրիստոսի հարությանը բնության եւ մարդկային կյանքի վերագարծնքի խորհուրդն ունի:

Այսօր, երբ անդրադառնում ենք առաջին եկեղեցու հիմնադրմանը, Հայոց եկեղեցում Պատարագին ընթերցվում է Հովհաննեսի Ավետարանի Գ գլխից մի հատված, որը վերաբերում է վերստին ծննդանը՝ ս. Մկրտությանը: Նիկողեմոս անունով մի փարիսեցի, որ լսել էր Հիսուսի կատարած հրաշքների եւ բժշկումների մասին, հասկանում էր, որ Նա տարբերվում է մյուսներից, քանզի Աստված անպայման Նրա հետ է: Եվ ահա Նիկողեմոսը գիշերով գաղտնի գալիս է Հիսուսի մոտ, քանզի ցերեկը Նրան կարող էին տեսնել իր մտերիմները: Տերը Նրան ասում է. «Եթե մեկը ջրից եւ Հոգուց չծնվի, ապա չի կարող Աստծո արքայությունը մտնել»: Բնականաբար, Նիկողեմոսը չի հասկանում Տիրոջ այս խոսքերը, քանզի ինչպե՞ս կարող է ծեր մարդը Նորից ծնվել իր մոր որովայնից: Եվ Հիսուսը բացատրում է, որ Իր ասածը հոգեւոր ծննդյան մասին է:

Բարեպա՛շտ հավատացյալներ, ավետարանական այս հատվածը մեր եկեղեցու ս. Մկրտության կանոնի անբաժանելի մասն է: Եվ մենք տեսնում ենք, որ Աշխարհամատրան այս կիրակի օրը, երբ անդրադառնում ենք առաջին եկեղեցու հիմնադրմանը, սուրբգրային ընթերցվածն ամենեւին էլ ոչ պատահականորեն վերստին ծննդանը՝ ս. Մկրտության խորհրդի մասին է: Որովհետեւ ս. Մկրտությանը ենք դառնում եկեղեցու անդամ եւ քրիստոնյա: Մարդու հոգեւոր կյանքը սկսվում է ս. Մկրտության խորհրդով՝ շարունակվելով մինչեւ մահ: Պետք է միշտ հիշել, որ այս խորհուրդը մարդկանց կամ հոգեւորականների կողմից հաստատված մի արարողությունն է, այլ յուրաքանչյուրին ուղղված աստվածադիր պատգամ:



Անցել է արդեն ավելի քան հարյուր տարի, սակայն ցեղասպանության հեռավոր հետեւանքները տեսնում ենք մինչ այսօր։ Այդ հզորագույն սթրեսը, որը վերապրեց հայ ժողովուրդը, ցավոք, չէր կարող անցնել՝ չթողնելով ոչ մի հետք։ Բժշկության մեջ հայտնի է, որ ցանկացած հոգեկան վնասվածք (տրավմա) հետագայում կարող է մի շարք հիվանդությունների պատճառ դառնալ։ Այսօր ցեղասպանության հեռակա հետեւանքները մենք տեսնում ենք հայ ժողովրդին ծանոթ, այսպես կոչված, երեւանյան հիվանդության (պարբերական հիվանդություն) մեջ։ Ինչպե՞ս է գործում այս մեխանիզմը, եւ ինչպե՞ս պայքարել գենետիկ հիշողության հզոր ուժի հետեւանքների դեմ։

Պետք է նշել, որ ցեղասպանության հետ կապված հոգեկան վնասվածքը հոգեբանության եւ բժշկագիտության մեջ ամբողջովին ուսումնասիրված չէ՝ ի տարբերություն հրեա ժողովրդի դեմ կատարված ողջակիզմանը, որը ժամանակին եղել է հոգեբանների եւ հոգեբույժների ուշադրության կենտրոնում։ Պարբերական հիվանդությունը (ՊՀ) համարվել է եւ դեռ շարունակում է համարվել զուտ մարմնական հիվանդություն, որը կրում է գենետիկ բնույթ եւ անցնում է ժառանգաբար։ Ինտերնիստները, մանրակրկիտ նկարագրելով հիվանդի հոգեախտաբանությունը՝ դեպրեսիա, տագնապ, վախ, վարքագծային խանգարումներ եւ այլն, որին նախորդում են ցավային նոպաները, անտեսել են դրա կարեւորությունը հիվանդության առաջացման գործ-

ընթացում՝ շեշտը դնելով սոմատիկայի՝ ցավերի եւ ասեպտիկ բորբոքման վրա։ 1938-ին Լեւոն Յովհաննիսյանը, աշխարհում առաջինը նկարագրելով ՊՀ-ն, իր «Հոգեկանի եւ մարմնականի փոխհարաբերությունները ներքին հիվանդությունների կլինիկայում» աշխատության մեջ ՊՀ-ի պաթոգենեզի եւ բուժման վերաբերյալ ցուցաբերեց ամբողջական եւ միջդիսցիպլինար մոտեցում, որն էլ հետագայում հիմք հանդիսացավ ՊՀ-ի հոգեմարմնական էության բացահայտմանը։ Հետագայում Ա. Այվազյանը 1982 թ., նշելով նյարդահոգեկան խանգարումների կարեւորությունը, որոնք նկարագրված են այս հիվանդության ժամանակ, հանգում է այն եզրակացության, որ այս հիվանդության վաղ ախտորոշումը, պաթոգենեզը եւ բուժումը պետք է փնտրել հոգեկան աշխարհում։ 1993 թ. Է. Նազարեթյանն առաջ է քաշում այն վարկածը, որ ՊՀ-ն պատկանում է աղապատեցիկ հիվանդությունների շարքին (փսիխոսոմատիկ հիվանդություն)։ Այս ամենը հանգեցրեց իմ կողմից՝ որպես հոգեբերապետ, այս մոտեցման ավելի խոր ուսումնասիրությանը։ Այդ հետազոտությունների արդյունքում 2008-ին պաշտպանեցի «Հոգեմարմնական խանգարումները պարբերական հիվանդության ժամանակ» թեզը, որն ավելի գիտականորեն եւ հիմնովին բացահայտեց պարբերական հիվանդության հետտրավմատիկ սթրեսային խանգարման բնույթը։ 2005-ին Ստամբուլում կայացավ տարածաշրջանային կոնգրես՝ «Մարդն առաջացնում է հոգեկան տրավմա եւ պատճառ է

Պարբերական հիվանդություն. ցեղասպանության հետեւանքները զգում ենք առ այսօր

դառնում միգրացիայի» թեմայով, որի շրջանակներում ես հանդես եկա «90 տարի շարդերից հետո հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ» զեկույցով այն ժամանակ, երբ Թուրքիայում արգելված էր «ջարդ» բառը։

2006-ին Թուրքիայում հերթական կոնֆերանսին ներկայացրեցի զեկույց «Պարբերական հիվանդության ժամանակ աֆեկտիվ խանգարումները հայերի մոտ» թեմայով՝ նշելով ցեղասպանության հետեւանքով առաջացած հոգեկան եւ մարմնական տրավմատիկ բնույթի ախտանիշները՝ պարբերական հիվանդությամբ տառապող անձանց մոտ։ Թուրքերը ժխտում են ցեղասպանությունը, սակայն չեն կարող ժխտել համամարդկային գիտությունը, որը ցույց է տալիս, որ ցեղասպանության հետեւանքները փոխանցվում են մինչեւ 7 սերունդ։

Պատահական չէ, որ պարբերական հիվանդությունը հանդիպում է հիմնականում ցեղասպանությունը վերապրածների սերունդների մոտ, ինչն առիթ է հանդիսանում փնտրել սկզբնաղբյուրը հենց տարածաշրջանային եւ էթնիկ բնույթ ունեցող հիվանդությունների հոգեախտաբանության մեջ։ Թերեւս այսօր նման հարցերի ուսումնասիրությունն ունի իր դժվարությունը, սակայն ցուցաբերելով պատմական մոտեցում հետազոտվող հիմնախնդրին՝ անալոգիայի, ինդուկցիայի, դեդուկցիայի եւ ամբողջական սիստեմային մոտեցման միջոցով, հնարավոր է հասկանալ ներկայի եւ անցյալի փոխկապակցվածությունն ու փոխհարաբերությունները։

Ցեղասպանությունից հարյուր տարի անց ուսումնասիրության առարկա է հանդիսանում միայն այն գրականությունը, որում նկարագրված են տարբեր դեպքեր՝ կապված այս հիվանդության հետ։ Այսպես, հայտնի է, որ ցեղասպանությունից տասնյակ տարիներ անց հայ գաղթականների շրջանում ի հայտ էր գալիս անհայտ մի հիվանդություն, որը հաճախ ան-

վանում էին նաեւ հանելուկային։ Այն ուղեկցվում էր պարբերաբար առաջացող ուժեղ ցավերով, որոնց չէր օգնում ոչ մի դեղորայք եւ ոչ մի վիրաբուժական միջամտություն. այն ինքնուրույն անցնում էր՝ իրենից հետո չթողնելով ոչ մի ախտաբանական խանգարում։ Օտարագրի հեղինակները նկարագրում են նաեւ Լիբանանի Անճառ գյուղում ապրող (որի բնակիչները հիմնականում մուսալեռցիներ էին) գաղթական մի հայկական ընտանիք՝ կազմված 52 անդամից, որոնցից 22-ը տառապում էին պարբերական հիվանդությամբ (4-5 սերունդներում)։

Այսպիսով՝ հարց է առաջանում. եթե այն զուտ մարմնական հիվանդություն է, ապա ինչպե՞ս կարող են ցավերն առանց որեւէ պատճառի սկսվել եւ առանց որեւէ դեղորայքի անհետանալ։ Ո՞րն է հանելուկը։ Գուցե սա, իսկապես, ոչ թե մարմնի, այլ հոգու ախտ է։

Ամերիկացի հայտնի հոգեբույժ, բազմաթիվ գրքերի հեղինակ Բեւեյ Վան Դեր Կոկկը, երկար տարիներ զբաղվելով հետտրավմատիկ սթրեսային խանգարումների (PTSD - post traumatic stress disorders) եւ հոգետրավմայի ուսումնասիրությամբ, իր «Body keeps the score» գրքում նշել է, որ տրավման չի կարող համարվել ուղղակի քայքայում տեղի ունեցած մի իրադարձություն։ Այն հետք է, որը տպվում է մեր գիտակցության, ուղեղի եւ մարմնի մեջ։ Այդ հետքը բերում է նրան, որ ներկայում մարդն իր փրկության համար դեռ շարունակում է պայքարել այն դեպքում, երբ վտանգն արդեն անցյալում է։ Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում նա պարզել է, որ սթրեսը փոխում է ուղեղում տեղի ունեցող պրոցեսները, նրա աշխատանքը։ Փսիխոտրավման ազդում է ամբողջ օրգանիզմի վրա։ ՀՏՍԽ-ի (Հետտրավմատիկ սթրեսային խանգարում) ժամանակ մարմինը շարունակում է իրեն պաշտպանել անցյալի վտանգներից։ ՀՏՍԽ-ից ազատում նշանակում է վերացնել

այդ շարունակական սթրեսային մոբիլիզացիան եւ օրգանիզմը բերել «անվտանգության» վիճակի։

Եթե ուսումնասիրենք պարբերական հիվանդությամբ տառապող անձանց հոգեկան վիճակը, կտեսնենք շատ նմանություններ եւ կհանդիպենք կրկնվող երեւույթների, որոնք բնորոշ են միայն նրանց։ Եթե ընդունենք, որ ցեղասպանությունը եւ դրա հետ կապված սթրեսն այստեղ կապ չունեն, ապա ինչո՞ւ ՊՀ հիվանդները չեն կարողանում դիտել ֆիլմեր, որտեղ ցուցադրվում է բռնություն, ինչո՞ւ են նոպաներն ուժեղանում ապրիլ ամսին։ Սրանք տարիների ընթացքում կատարված ուսումնասիրությունների եւ տասնյակ հիվանդների հետ աշխատանքի արդյունքում ստացված տվյալներն են, որոնք հիմք են դառնում փաստել այն մասին, որ, իսկապես, այսօր կան ցեղասպանության հեռակա հետեւանքներ, որոնք դեռ ապրում են գենետիկ հիշողության մեջ։

Երեւանյան հիվանդությամբ տառապող հիվանդների մոտ պարզ երեւում են հետտրավմատիկ սթրեսային խանգարմանը բնորոշ երեւույթներ՝ գիշերային սարսափներ, ցրվածություն, բաժանման մտավախություն, թերաթմեքություն, զոհի կարգավիճակ, տխրություն, անհանգստություն, ագրեսիա, ատելություն, վախ, տագնապ, մեղավորության զգացում, խուճապ։

ՊՀ-ի ժամանակ նախանոպայական շրջանում նկատվող տրոֆիկ փոխանակային բնույթի նշանները (քաշի կորուստ, ոչ չաքարային դիաբետ եւ այլն) նկարագրվել են դեռեւս 1929-ին, երբ ռուս հեղինակների կողմից ներկայացվել են ցեղասպանությունը վերապրած, Կոստանդնուպոլսից գաղթած 29 տարեկան հայ հիվանդի հոգեախտաբանությունը եւ ուղեկցվող հիվանդությունները (ծանր դեպրեսիա, 12 տարի տևողությամբ ոչ չաքարային դիաբետ), որ նրանք կապում էին հայկական շարդերի հետ։

Շարունակությունը՝ էջ 5

Տ. ՉԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ԶԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻՆ (15 ապրիլի, 2018 թ.)

Սկիզբը՝ էջ 3

Նույն այս պատվերը տվեց նաեւ Քրիստոսն իր առաքյալներին՝ բոլորին մկրտելու Ս. Երրորդության՝ Հոր, Որդու եւ Ս. Հոգու անունով։ Այո՛, մարդ կարող է լինել շնորհալի եւ ապրել քրիստոնեավայել, բայց եթե նա մկրտված չէ, ապա քրիստոնյա չէ։ Մենք չենք մկրտվում չարից պաշտպանվելու, հիվանդություններից բժշկվելու, չար աչքից խուսափելու կամ այլ բաների համար։ Մենք մկրտվում ենք այն հստակ համոզմամբ, որ ցանկանում ենք դառնալ Եկեղեցու անդամ եւ քրիստոնյա։ Սա մեկ անգամ է կատարվում մարդու կյանքում, ուստի կարելու է նաեւ այս խորհրդի պատրաստված լինելը։ Շնորհների ուղղված՝ Եկեղեցու իրողորդ միշտ նույնն է՝ ձեր գավակներին շուտափույթ մկրտեք եւ թույլ տվեք նրանց արքայությունը ժառանգել։ Վերստին ծննդամբ սկզբնավորված կյանքն անընդհատ վերանորոգության եւ վերագարթոնքի կարիք ունի, քանզի Տիրոջ հարության մամեն ինչ նոր եղավ։ Հարության այս օրը նույնպես մեզ մտածելու տեղիք է տալիս. արդյոք մենք ապրո՞ւմ

ենք իբրեւ հարուցյալ եւ հաղթանակած Փրկչի գավակներ, արդյոք առանց երկմտանքի հավատո՞ւմ ենք այդ հարությանը։ Ինչպես չկա քրիստոնեություն առանց հարության իրականության, այնպես էլ չկա Եկեղեցու անդամություն՝ առանց ս. Մկրտության։

Սիրելիներ՛, այս կիրակին ազատատենչ Հայկի գավակներին հիշեցնում է նաեւ Հայոց աշխարհի առաջին եկեղեցու՝ աստվածակառույց Ս. Էջմիածնի Մայր տաճարի մասին, ուր դարեր շարունակ հավաքվում ենք Տիրոջ ճաշակելու, Նրանով զորանալու եւ քրիստոնեական մեր ազգային ինքնության մասին վկայելու։ Մայր տաճարը վաղուց դադարել է պարզապես քարեղեն կառույց լինելուց, այն ոգի է եւ կյանք, մեր պատմության վկան ու հավերժության առհավատչյան։ Նրա ամեն քարը մեր հայրերի աղոթքով է շաղախված ու սրբացած, իսկ ս. Խորաններից անդադար աղոթք է հնչում մեր հայրենիքի եւ Եկեղեցու անսասանության, աշխարհի խաղաղության ու մեր ժողովրդի բարօրության համար։ Այս տաճարն այնքան զորավոր է,

որ ամեն հայի երկրից կտրում եւ երկինք է տանում։ Աստծո է մարդու հանդիպման այս սրբավայրում են աղոթել մեր հավատքի հայր ս. Գրիգոր Լուսավորիչն ու ս. Տրդատ արքան, ս. Մեսրոպն ու ս. Թարգմանիչները, մեր ազգի մեծերը, երանաշնորհ հայրապետները եւ բազում հայորդիներ։ Մի պահ մտածե՛ք՝ մի՞թե օրինություն եւ շնորհ չէ, որ այսօր էլ մենք հնարավորություն ունենք նույն վայրում աղոթելու, քայլելու նրանց ոտնակոխ տեղերով, մեր հոգու աչքերով նրանց տեսնելու եւ Աստծո առաջ մեր սիրտը բացելու։ Անկասկած, Աստված մեզ մեծ շնորհ է արել՝ ապրելու անկախացած հայրենիքում եւ տեսնելու օրեցօր ծաղկող Հայոց Եկեղեցին ու նրա հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը։ Երբ մի պահ մտածում եմ այս ամենի մասին, սարսուռ է անցնում մարմնովս, հոգիս իրճվում է, բայց միեւնույն ժամանակ պատասխանատվության զգացումն է պատում միտքս։ Ամեն անգամ, երբ Մայր տաճարի ս. Խորանին պատարագում եմ եւ մի պահ անդրադառնում, թե ովքեր են այս նույն վայրում Տի-

րոջ փրկարար մարմինն ու արյունը բաշխել մեր Եկեղեցու անդամներին, ինձ շատ փոքր եմ զգում, բայց վերագտնում եմ ուժերս՝ Տիրոջ օրհնությամբ եւ Նրա անբավ ողորմությամբ։

Ուրեմն Կանաչ կիրակին եւս մեկ պատեհ առիթ է մեզանից յուրաքանչյուրի համար՝ մեր հավատարմությունը, սերն ու նվիրումն արտահայտելու Ս. Էջմիածնի եւ Հայոց Եկեղեցու զլխի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդեպ՝ ասելով. «Տե՛ր, անսասան պահի՛ր ու պահպանի՛ր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ս. Թադեոս առաքյալի Աթոռն ու հովվապետական գավազանը մեր սիրելի Հայրապետի, անհողորդ պահի՛ր եւ հավատքի մեջ զորացրո՛ւ նաեւ ամեն հայի»։

Թող Տիրոջ ողորմությամբ միշտ բաց լինեն Մայր տաճարի դռները մեր առաջ, իսկ նրա զանգերի դղանջներն ավետեն նորանոր հաղթանակների մասին։

Աստծո սերը, օգնականությունը եւ ս. Գրիգոր Լուսավորչի առաքելական հավատքը միշտ ուղեկից լինեն մեզ այս կյանքում՝ այսօր, վաղը եւ հավիտյանս. ամեն։

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՆՈՐԱԴԱՐՁԸ ՉԱՐԵՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՉ Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշված հայ ժողովրդի վիճակը, 1915-ի ցեղասպանությունը եւ հետագա տարիների ողբերգական իրադարձությունները Չարենցն ապրել է անձամբ եւ պատկերել իր ստեղծագործություններում: Ծակատագրի բերումով լինելով Եղեռնի սերնդի ներկայացուցիչ՝ Չարենցն ամբողջ կյանքում փորձեց համատեղել ազգային ողբերգությունը ազգային վերածննդի հետ: Դա ժամանակի օրախնդիր պահանջն էր՝ հայրենիքը բզկտվել էր, ժողովուրդը՝ կոտորվել, բայց փրկվածները դեռ պետք է ապրեին: Ծակատագրական պահին ժողովրդի վերջին հույսը վառ պահելու այդ դժվարին առաքելությանը որդեգրվեցին Յ. Թումանյանն ու Վ. Տերյանը, արեւմտահայ գրողների մնացորդաց սերունդը՝ Վ. Թեքեյանն ու Յ. Օշականը... Նրանց հետ էին նաեւ մյուսները, գրեթե բոլորը, այդ թվում՝ Ե. Չարենցը:

Ժամանակը պահանջում էր մի նոր գաղափարախոսություն, որ այլ կերպ չէս բնորոշի, քան վերապրումի գաղափարախոսություն: Մի կողմից՝ ժողովրդի բնաջնջում, հոշոտված հայրենիք, մյուս կողմից՝ միացյալ ու անկախ Հայաստանի երազանք, ավերակների վրա հայոց պետականության վերականգնում, նաեւ քաղաքական այլ կողմնորոշում ունեցող գործիչների հույսեր՝ կապված ռուսական հեղափոխության հետ:

Բայց այս ընթացքում նախ պետք էր բուն հայկական կյանքի գիտակցումն ունենալ, որ գրողի համար նշանակում էր իրականության գեղարվեստական պատկերում: Ահա այստեղից էլ ամեն ինչ սկսվում է: Հայ գրականության նախընթաց ամբողջ պատմության մեջ գրողի եւ ժամանակի կապը երբեք այնքան սերտ չի եղել, որքան այս օրերին: Սա մի ուրիշ ժամանակ էր, երբ գրականությունը ծնվում էր հայոց այրվող գյուղերից ու ավերվող քաղաքներից բռնագաղթի ենթարկվող ժողովրդի ծանր թառանչից, ճանապարհների ընկնողների մահվան մրմունջից, դիմադրական շարժման կարճատեւ ոգեւորությունից: Սա ժողովրդի անմիջական պատմության գրականությունն էր:

19-րդ դարի ամբողջ գրականությունը հայոց գիտակցությունը սնեց ազատագրական գաղափարներով, պետականության վերստեղծման ծրագրերով, մշակեց այդ նպատակին հասնելու ուղիներ: Մի զգալի



մասով դա գաղափարապաշտական գրականություն էր՝ Աբովյան, ԲաժՖի, Ծերենց, Մուրացյան, մի զգալի մասով՝ հրապարակագրական՝ Արծրունին իր «Մշակ»-ով, մյուս պարբերականները: Այս ամենից ածանցվում էր ազգային գաղափարապաշտության իրատեսությունը:

Բայց եկավ ճակատագրական պահը, եւ ամեն ինչ մնաց թղթի վրա: Արյունոտ մղձավանջը՝ որպես նոր ժամանակների մռայլ ուրվական, ինքը թելադրեց գեղարվեստական խոսքի հետագա ամբողջ տրամաբանությունը:

Հարյուր տարուց ավելի հայ գրական ու քաղաքական միտքն զբաղված էր ժողովրդին արթնացնելու, զենքով ու ազատագրական գաղափարներով զինելու գործունեությամբ: Այդ ճանապարհին իրենց անձնագոհությամբ փայլատակեցին երեւելի անհատներ, իրականացվեցին գործողություններ (բանկ օտոտման), պայքարի ելան նվիրյալ ազատամարտիկների՝ ֆիդայի-հայդուկների մի քանի սերունդներ... Բայց այդ ամենը, ավաղ, ավարտվեց 1915-ի ցեղասպանությամբ՝ ժողովրդի բնաջնջումով եւ հայրենիքի կորստով: Հայրենակերտումի այս փուլը չկայացավ:

Հայրենակերտումի երկրորդ փուլն սկսվեց Սարգսյանի հաղթանակով, 1918 թ. մայիսի 28-ին հայոց Առաջին հանրապետության հռչակումով եւ շարունակվեց Երկրորդ (խորհրդային) եւ Երրորդ (անկախ) հանրապետություններով: Հայրենակերտումի այս փուլը, որ շուտով կբոլորի

100-ամյակը, իրականացվում է դանդաղ եւ մեծ դժվարություններով:

1915-ին Չարենցը հրատարակում է «Կապուտայա հայրենիք» պոեմը, որի մեջ միախառնված են բանաստեղծի բախտն ու հայրենիքի պատմությունը, որ միասնաբար նշանակում էր ազգային ճակատագիր: Այստեղ է, որ բանաստեղծը հասնում է հոգեբանական մի այսպիսի պատկերամտածողության. «Կապուտայա սիրուհիս, ամուսնանա՞նք պիտի մենք»: «Կապուտայա սիրուհիս» հայրենիքն էր, որ «ես իմ առնուլ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում» տաղում պիտի ձեռնկերպվեր եւ ներկայանար որպես «Հայաստան-յար»: Սա հայրենիքի ու անհատի ծուլման, միաձուլման, միավորման ամենավերին՝ բարձրագույն աստիճանն էր եւ նշանակում էր հայրենիքի խորապես անհատական ընկալում. հայրենիքը մարդն էր, այս դեպքում՝ անունը Եղիշե Չարենց, մարդը հայրենիքն էր՝ ի սկզբանե մինչ ի վախճան՝ անունը Երկիր Նաիրի:

Սակայն Չարենցը միայն քնարական ապրումներով չէ, որ հայրենիքի հետ էր: 1915-ի օգոստոսին նա զինվորագրվում է հայոց կամավորական վեցերորդ զևորին եւ մեկնում գործող ճակատ: Հոկտեմբերին նա արդեն Վանում էր, իսկ դեկտեմբերի 25-ին մասնակցում է Սուլդուզի դաշտում, նաեւ Թափառեզի լանջերին ծավալված կռիվներին: Հուլիսի 25-ի վկայությամբ զինվորների առջեւ նա հանդես է եկել նաեւ ոգեպնդող ելույթներով: Բանաստեղծն ու հայրեն

նիքի զինվորը Նույն ճակատագրի կրողն էին:

Պատերազմական ծանր տպավորություններով 1916-ին հրատարակում է «Դանթեական առասպել» պոեմը: Տեղագրված է. «Տաճկաստան-Պարսկաստան, ռազմաճակատ» եւ նվիրված է նահատակ ընկերներին. «Միհրան Մարգարյան, Ստեփան Ղազարյան եւ Աշոտ Միլիոնյան նահատակ ընկերներին, որ ընկան սրբազան մարտում սրբազան եւ սիրուն հայրենիքի համար»: Ամբողջ պոեմը ցեղասպանության սարսափների գեղարվեստական պատկերումն է՝ ավերված գյուղեր ու քաղաքներ, մորթոտված մարդկային մարմիններ, հողին հավասարեցված վաղնջական ու տոհմիկ մի քաղաքակրթություն: Պոեմում Մեռած Զաղաքն ավերված Վանն է, որ ընդհանուր մի խորհրդանշ է հայոց աշխարհի համար: Դարձյալ կենդանի է հույսը, որ անթեղված է պոեմի եզրագծի տողերում. «...Ու պե՛տք է քայլե՛լ ու քայլե՛լ համառ՝ // Ապրելու հսկա տենջը բռն առած...»:


Պատերազմական օրերի քնարական անդրադարձ են «Հայրենիքում» բանաստեղծությունը, «Հարդագողի ճամփորդներ» բալլադը: Վերջինում հռետորական հարցի պես հայրենիքի ավերումն ու համաշխարհային պատերազմը տեսած սերնդի պատասխան ակնկալող հռետորական կեցվածքն է, կյանքի իմաստի որոնման հարցականներն են բախտի անորոշության առջեւ: Այդպես այդ սերնդի ծայրն ասես լսվում էր անդունդի միջից: Ձեռքերը վեր մեկնած՝ նրանք՝ վիրավորված, ծաղրված, չհասկացված, արհամարհված, ոտնակոխ ու մերժված, փրկության ելք էին որոնում դժոխքից՝ երազելով հարդագողի ճանապարհների ոսկեման հեռուները: Մինչդեռ ելքի ճանապարհները փակ էին:

Ազգային ողբերգության ծանր տպավորությունների արգասիք է «Վահագն» պոեմը, որ ավարտվում է այս դաժան տոհմով. *Եվ երբ քարշ տվին դիակդ արևաքամ, Որ նետեն քաղցած ուսմաններին կեր-Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան Եվ արևոտ միգում ճարճատում են դեռ...*

Այս տարիներից Չարենցի ստեղծագործության մեջ ամրապնդվում է առաջին իսկ բանաստեղծություններից եկող եւ աստիճանաբար իմաստային հսկայական կշիռ կրող «ճանապարհ» բառը: «ճանապարհ» բառ-խորհրդանշանը Չարենցին բնութագրող հիմնական բառ-բանախիչն է, նրա աշխարհի տանող մուտքի դռների գաղտնաբառը: Դա դեռեւս պիտի հասներ «Փիրք ճանապարհի» ժողովածուին, դրանում գետեղված «Պատմության քառուղիներով», «Դեպի լյառը Մասիս» պոեմներին եւ շարունակվեր հետագա շրջանի ստեղծագործությունների մեջ:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊՐԵՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Սկզբը՝ էջ 4

Հիվանդը դրանք ձեռք էր բերել այն բանից հետո, երբ 14 տարեկանում նրա աչքի առաջ գլխատել էին ծնողներին եւ երկու եղբորը: Դեղորայքային բուժումն արդյունք չի տվել: Ելնելով այն հանգամանքից, որ հիվանդն ունեցել է հոգեկան տրավմա, որի հետեւանքով էլ առաջ է եկել վերը նկա-

Պարբերական հիվանդություն. ցեղասպանության հետեւանքները զգում ենք առ այսօր

րագրված ախտաբանությունը, իրականացվել է հոգեթերապիա: Արդյունքում, հոգեթերապեւտիկ բուժման շնորհիվ, հիվանդի վիճակը կարգավորվել է, եւ վերացել են ոչ շաքարային դիաբետի նշանները: Օրեցօր հիվանդի ինքնազգացողությունը լավացել է, եւ երեք շաբաթ իրականացված հոգեթերապիայից հետո հիվանդը դուրս է գրվել:

Եղեռնը վերադարձների ժառանգներ

- Մի քանի տարի առաջ հեռուստացույցով հաղորդում էի դիտում, որը նվիրված էր Ցեղասպանության զոհերին: Լսեցի, որ սպանդարարները անխղճորեն սպանել էին մի կնոջ: Չեմ կարող նկարագրել, թե ինչ զգացի այդ պահին, բայց ես պարզ հիշում եմ, որ բռնեցի որովայնս ու ուժեղ ցավից ծնկի իջա: Այդ օրվանից նույնպես ավելի

հաճախացան: Նույնպիսի առաջ ես տագնապ էի զգում, կարծես օրգաններս սրտի նման բաբախեին, հետո ցավը ուժգնանում էր, իսկ հաջորդ օրը, ինձ թվում էր, թե մարմինս չորս կողմից քաշել են: Բայց միեւնոյն ժամանակ հոգեւոր մեծ հանգստություն էի զգում:

- Տառիկս եւ պապիկս հայրենադարձներ են, գաղթել են Արեւմտյան Հայաստանից: Երբ նրանք ինձ պատմում էին իրենց հիշողությունները, ես ժապավենի նման տեսնում էի այդ բոլոր տեսարանները, կարծես ականատես լինեի այդ ամենին, նույնիսկ արյան հոտն էի զգում: Երբեմն ինձ թվում էր, թե ես հողի տակ եմ, որ ինձ թաղել են: Ունենում էի սարսափելի երազներ. ինձ թվում էր, թե մի տղամարդ ընկել էր իմ հետեւից, ուզում էր ինձ վնասել:

- Մանուկ հասակում, երբ խաղում էի տիկնիկների հետ, սիրում էի հագուստը հանել եւ փաթաթել լաթի կտորներով՝ երե-

խաներին ասելով, թե փախնեք, մեր ետեւից հիմա գալու են ու մեզ կսպանեն: Երբ հղի էի, գիշերային սարսափելի երազներ եւ զգացողություններ եմ ունեցել, թվում էր, թե երեսային կկորցնեմ, կփախցնեն: Շատ անգամ լինում էր, եւ մինչ այսօր էլ դեռ կա, որ ես ինքս ինձ կողքից եմ նայում, երբեմն ինձ թվում է՝ ես գոյություն չունեմ, որովհետեւ կարծես մի քանի մարդ լինի իմ մեջ: Ես ուզում եմ հասկանալ իմ տեղը, իմ նշանակությունը: Ես կարծես վերանում եմ ու ուզում եմ գտնել ինձ: Դա նույնպես դեպրեսիաների պատճառ է դառնում: Երիտասարդ տարիներիս զգում էի, որ պետք է նույնպիսի եւ գերլարված էի դառնում, շատ ագրեսիվ, նյարդայնացած:

Եվս մի հիվանդի պատմություն. -Հիշում եմ՝ մի անգամ՝ ապրիլ ամսին, Եղեռնի մասին ֆիլմ դիտեցի, դա «Արտույտների ազարակն» էր:

Շարունակությունը՝ էջ 6



Սկզբը՝ թիվ 6

Մեր ժամանակներում եւս քրիստոնեական ուսմունքի մեկնաբանները եւ նոր գիտնական-աստվածաբանները անտարբեր չեն անցել հրեական հուղափառման միաստվածության եւ քրիստոնեական Սուրբ Երրորդության միջեւ ծագած եւ շարունակվող բանավեճի կողքով: Այն աղանդների առատությունը, որով քրիստոնեության հակառակորդները (Արիոս, Սաբելիոս, Փոտինոս, Մանիքեցիք, Վաղենտինիայք, Մարկիոնացիք, հոգեմարտ Մակեդոն եւ այլք) հակադրվեցին Նիկիական ժողովի ընդունած որոշումներին եւ, հատկապես, Նիկիական հանգանակին՝ առիթ դարձավ III-IV դարերում այնպիսի մեծ թվով հանգանակների մեկնությանց, որ երբ XIX դարի կեսերին եվրոպացի երկու գիտնական-աստվածաբաններ հավաքեցին դրանց լատիներեն եւ հունարեն բնագրերը եւ համակարգված, գերմաներեն մեկնաբանումներով հրատարակեցին միմյանցից անկախ, ապա այդ երկու ժողովածուներից յուրաքանչյուրը կազմեց երեք սովորական հատոր: Դրանց հեղինակներից առաջինն Ավգուստ Յանսն էր (1792-1863)՝ նշանավոր գերմանացի բողոքական պրոֆեսոր, հանգանակագետ, որն իր «Հին եկեղեցու հանգանակների եւ հավատքի կանոնների գրադարան» աշխատությունը հրատարակեց 1842 թվին, իսկ հաջորդ երկու հրատարակությունները ուրոշ լրացումներով լույս տեսան Եսմահու՝ 1877 եւ 1897 թվերին: Երկրորդը՝ նորվեգացի աստվածաբան, ակադեմիկոս Կարլ Պաուլ Կասպարին (1814-1892) «Սկրտության հանգանակի եւ Հավատո կանոնների ակունքների պատմության շուրջ» վերնագրով իր եռահատոր ժողովածուն հրատարակեց 1866, 1870 եւ 1875 թվերին: Ծագումով հրեա Կասպարին ընդունել էր յուրօրինակություն եւ աստվածաբանության պրոֆեսոր էր Խրիստիանիայում (հետագայում՝ Օսլո):

Կասպարին ամենայն բծախնդրությամբ ներառել եւ ծանոթագրել է Կապադոկիայի, Կոստանդնուպոլսի, Հռոմի, Անտիոքի, Պաղեստինի, Ալեքսանդրիայի եւ այլ հայտնի եկեղեցական հայրերի հեղինակություն, որը կոչվում է «Հանգանակների գնահատմամբ»

ՎԻԵՆՆԱՅԻ ԵՎ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻՆԻՍԿՐՅԱՆ ՀԱՅՐԵՐ ՆՈՎԱԵԹ ԳԱԹԸՐՃՅԱՆԸ ԵՎ ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳԻՍՅԱՆԸ՝ ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԻ ԱԿՆԱՌՈՒ ՄԵԿՆԱԲԱՆՆԵՐ

(Եվրոպացի մասնագետների գնահատմամբ)

Նակած հանգանակները, որոնցից յուրաքանչյուրում նախ մատնանշվում էին ուղիղ հավատի կանոնները, ապա դատապարտվում եւ նզովվում ամեն կարգի աղանդների պարագլուխները: Նորվեգացի աստվածաբանն ի մոտո հետաքրքրվել է նաեւ Հայ Եկեղեցու հանգանակով, որ 1869 թվին գրի է առել Դորպատի համալսարանի հայ ուսանողների բերանացի հաղորդումներից՝ անշուշտ նրանց իսկ գերմաներեն թարգմանությամբ, եւ հրատարակել «Quellen...» ժողովածուի 2-րդ հատորում (1870, էջ 10-12): Հայկական հանգանակը նա բնորոշում է որպես «Ապաշխարության եւ խոստովանանքի հավատո հանգանակ» (Buzglaubensbekennnis), որ քահանան կարողալիս է եղել ամեն առավոտյան պատարագի սկզբում:

Վիեննայի Մխիթարյանների միաբանության երեւելի անդամ՝ պատմաբան, լեզվագետ, թարգմանիչ հայր Հովսեփ վարդապետ Գաթըրճյանը (1820-1882), որը թարգմանել է հին հունարենից Զենոփոսի «Կյուրոպեդիա» վեպը (1843), ծրագրել էր գրել «Տիեզերական պատմություն» հինգ հատորով, բայց հրատարակեց ընդամենը երկու հատոր (1849 եւ 1852), որից հետո տեսնելով Եվրոպայում մեղմ մյուսի ետեւից հրատարակվող հանգանակների ժողովածուները, Պաղեստինում եւ Երուսաղեմում գլուխ բարձրացրած սիոնիզմը, որը գորաշարժի էր ենթարկել հուդաիզմը եւ հին արիոսական նկրտումները, մի կողմ թողեց «Տիեզերական պատմություն»-ը եւ ձեռնամուխ եղավ Մխիթարյանների ձեռագրատանը պահվող հանգանակներին, ինչպես եւ իր համահավաք «Պատարագամատոյց»-ին:

Այստեղ եւս հմուտ պատմաբանն իրեն դրսևորեց որպես քրիստոսաբան եւ հանգանակագետ՝ շարադրելով «Հանգանակի հաւատոյ որով վարի Հայաստանեայց Եկեղեցի: Զննութիւն մեր Հանգանակին ծագման, հեղինակին եւ ժամանակին վրայ» ուսումնասիրությունը, որը թարգմանեց լատի լատիներեն՝ «De fidei symbolo quo Armenii utuntur: observationes: opus posthumum Viennae: Typis PP. Mechitharistarum, 1893. Գաթըրճյանի «Պատարագամատոյց»-ը եւս հրատարակվել է Հակոբյան Տաշյանի ձեռամբ՝

Վիեննայի Մխիթարյան տպարանում 1897 թվին) թվականներին, որոնք շուտով արժանացան եվրոպացի նշանավոր հետազոտողների ուշադրությանը, ովքեր երկար տարիներ զբաղված էին Կոստանդնուպոլսի, Պաղեստինի եւ Ալեքսանդրիայի նշանավոր քրիստոսաբան հայրերի կանոնադրած Հավատո հանգանակների համեմատական քննությամբ:

Կասպարիի եռահատոր ժողովածուից չորս տասնամյակ անց՝ 1897 թվականին, լույս տեսավ Ավգուստ Յանսի եռահատոր աշխատության երրորդ հրատարակությունը, որի երկու տարբեր բաժիններում՝ Եպիփան Սալամիսացու եւ նրան մերձավոր պաղեստինյան եկեղեցու հայրերի Հավատո հանգանակների քննության մեջ նշվում է. «Հարկ է առանձնացնել նորագույն ժամանակներին պատկանող Կատեղիան (Նկատի ունի Հ. Գաթըրճյանին) անունով հայ գիտնականի տեսակետը, որն իր «De Fidei Symbolo: Quo Armenii Utuntur Observationes Opus Posthumum» գրվածքում փորձում է ապացուցել, թե ինքը **Երմիայե** կոչված մեկնությունն առհասարակ Աթանասիոսի (Աթանաս Եպիսկոպոսի - Ա. Մ.) գործն է համարում, իսկ Եպիփանի երկրորդ հանգանակը դիտում է իբրեւ Հայ Եկեղեցում ընդունված Սկրտության հանգանակի հիմք, որը եւ իրապես ներկայիս Armeniacum-ի հիմքն է, եւ այն համարում է միայն Նախորդի լրամշակված ձևը. «Մինչեւ VI դարը, - նշվում է այնուհետեւ, - Հայաստանում Նիկիական հանգանակը բացառապես կիրառվել է իբրեւ Սկրտության հանգանակ: VI դարի ընթացքում այնտեղ ի հայտ են գալիս արդեն զանազան ծանոթության հետքեր **Երմիայե**-ի հետ: Դրան հակառակ, VII դարի ընթացքում Նիկիական հանգանակը լիովին դուրս է մղվում [Հայ Եկեղեցուց] եւ այդ ժամանակից բացառապես գերիշխում է Սկրտության հանգանակը, որը վերջին դարերում աստիճանաբար ստանում է ներկայիս Armeniacum-ի տեսքը» (August Hahn, Bibliothek der Symbole und Glaubensregeln der alten Kirche, 1897, S. 137):

Ներկայիս գիտական լսարանին եւ ընթերցողներին հաղորդակից դարձնելու համար հայ մատենագրության մեջ Նիկիական հանգանակի անդրադարձին, հարկ է կոնկրետ օրինակներով բացատրել այն, ինչն իր լատիներեն ուսումնասիրության մեջ քննության է առել Գաթըրճյանը: Բանն այն է, որ «Նիկիական հանգանակ» անվան տակ Սեբեոսի Պատմության մեջ առաջին անգամ ներկայացված է ոչ թե բուն «Նիկիական հանգանակ»-ը, այլ հանգանակի մի ընդարձակ մեկնու-

թյուն, որը կոչվում է «Հանգանակ Նիկիական ժողովոյն» (ինչպես նշում է Սեբեոսի քննական Պատմության հրատարակիչ դոկտոր Գ. Աբգարյանը (ծան. 568)՝ «Այս խորագիրը, ինչպես երևում է, ավելացրել են անցյալ դարի այն ընթերիսակողները, որոնցից օգտվել են Միհրդատյանը եւ Պատկանյանը: Հնագույն ձեռագիրը (համար 2639), ինչպես նաեւ մեր Մատենադարանում պահվող XIX դարի ընթերիսականությունները այդ վերնագիրը չունեն» - Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Եր., 1979, էջ 329) (էջ 156-157): XIX-XX դարերում Հայ Եկեղեցու ժամագրքում (Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, արարեալ Սրբոց թարգմանաց մերոց Սահակայ եւ Մեսրոպայ եւ Երանելի Հայրապետաց մերոց Գիտայ եւ Յովհաննու Մանդակունոյ եւ սրբոյն Ներսիսի Շնորհաւոյ, Վաղ(արշա)պատ, 1902, էջ 401-402) պատարագների ժամանակ ընթերցվող «Նիկիական հանգանակ» կոչված Հավատո խոստովանանքը գրեթե անփոփոխ կրկնում է Սեբեոսի Պատմության մեջ ավանդված տեքստը՝ աննշան քերականական տարբերակներով: Միակ էական տարբերությունն այն է, որ «Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եկեղեցի» տողի դիմաց ժամագիրքն ունի «Հաւատամք եւ ի միմիայն ընդհանրական եւ յառաքելական եկեղեցի» (էջ 401):

Ուստի, իրավացի չէ Սեբեոս պատմիչը՝ պնդելով, թե իր Պատմության մեջ ներկայացվածը հենց այն Նիկիական հանգանակն է, որ բերել էր Ռուսական 325 թվականի Նիկիո ժողովից (Պատմութիւն Սեբեոսի, գլ. Խ2, էջ 156): Անշուշտ պատմական իրողություն է, որ Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակեսը (նույն ինքը՝ Ռուսակեսը) անձամբ եղել է Նիկիո ժողովի մասնակիցը եւ վերադարձին իսկապես իր հետ բերել է բուն Նիկիական հանգանակը՝ ծավալով շատ ավելի փոքր, եւ այս փաստը հաստատում են Ագաթանգեղոսի Պատմությունը (Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տիփղիս, 1909, պրգ. 884, 885) եւ Մովսես Խորենացին (Խոր., Բ, գլ. Դ, էջ 240-241 եւ ԴԱ, էջ 243):

Այնպիսի արժանահավատ եւ խոշոր հայագետ, ինչպես Յոզեֆ Մարկլարտն է, Հայոց եկեղեցական թեմերին նվիրված իր աշխատության մեջ նույնպես հաստատում է Արիստակեսի մասնակցությունը Նիկիո ժողովին:

Շարունակելի
Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

Պարբերական հիվանդություն...

Սկզբը՝ էջ 5

Երբ նայում էի ցավալի տեսարանները, թե ինչպես էին ծեծում մարդկանց, հարվածում որովայնին, ոտքերին, մեջքին, պարանոցից բռնած ուզում էին խեղդամահ անել, այդ ժամանակ ունեցա ուժեղ նոպա: Երբ քնեցի, այդ նույն ֆիլմի տեսարանները եկան աչքիս առաջ, եւ ցավերը գնալով ավելի ուժեղացան: Զգում էի ուժեղ զայրույթ, կատաղություն, եւ ինձ թվում էր, թե այդ ծեծի ենթարկված մարդը եւ եմ եղել: Ցավերիս ժամանակ կարծես մեկն ինձ խեղդում էր, կոկորդիս շրջանում լինում էին ցավեր, ու շունչս փակվում էր, պարանոցիս հատվածում տեղի էր ունենում ջղաձգում, կարծես դանակով կամ թրով խփում էին պարանոցիս եւ ուզում էին կախաղան հանել, ինձ թվում էր՝ ուր որ է պարանոցս տեղից պոկվելու է: Ունենում էի գիշերային սարսափներ, տրամադրության անկում, առանձնանում էի բոլորից, առաջանում էր ա-

տելություն, կատաղություն բոլորի, նույնիսկ հարազատներես նկատմամբ: Երբ աչքերս փակում էի, աչքիս առաջ երեւում էին սարսափելի տեսարաններ. կարծես ինձ հետապնդում էին, փորձում էին վնասել, ու ես ահաբեկված վախ էի վերապրում: Եվ որպեսզի պաշտպանվեմ այս ամենից, աշխատում էի ավելի արագ վերածել ապրումները որովայնային ցավերի, որովհետեւ հոգու ցավը տանելը ավելի դժվար է, քան մարմնի ցավերը, եւ այդպիսով ես ավելի «հանգստանում էի»: Նոպայի վերջում զգում էի ինձ թուլացած, ծեծված, ջարդված վիճակում:

Հիվանդը բուժվել է հոգեթերապիայով՝ մասնավորապես նարեկաբուժությամբ, որից հետո երկու ամսվա ընթացքում վերացել են նոպաները եւ վերը նկարագրված զանգառները: Թուլացել է ամոթի զգացումը, վերականգնվել են մտավոր ունակությունները: Ինչպես հիվանդը ինքն է նշում,

Նոր սկսել է զգալ կյանքը: Հոգեթերապիայի դրական արդյունքը եւս մեկ անգամ ապացուցում է, որ ՊՀ-ն իր պաթոգենետիկ ունի հետտրավմատիկ սթրեսային խանգարման բնույթ:

Այսպիսով՝ ցեղասպանությունը, դարերի ընթացքում կրած տառապանքները, խոշտանգումները եւ երկարատե սթրեսային իրավիճակները՝ որպես «վնասվածք», իրենց հետքն են թողել անհատի, ընտանիքի, ազգի գենետիկ հիշողության մեջ, որոնք էլ սերնդեսերունդ փոխանցվում եւ ի հայտ են գալիս flashback ֆենոմենով՝ սթրեսային իրավիճակներում (երբ ներկայում անձին ուղղված հոգեմարմնական վտանգը սիմվոլիկ կերպով իրեն հիշեցնում է անցյալում կրած սթրեսները):

Ցեղասպանության վերքերը դեռեւս լիովին ապաքինված չեն, եւ այսօր սերունդները, իրենց գենետիկ հիշողության մեջ կրելով անցյալում ստացած տրավման, հոգե-



պես եւ մարմնապես վերապրում են այդ ցավը, որն էլ արտահայտվում է հայերին բնորոշ պարբերական հիվանդությամբ:

Արմեն ՆԵՐՍԻՍՅԱՆ
Հոգեթերապետ, նարեկաբույժ

Սկզբը՝ թիվ 4-7

«Պարապ վախտի խաղալիք» առակագիրը: Չափածո առակների այս ժողովածուն ստեղծվել է Դորպատից վերադառնալուց հետո՝ 1838-41 թթ.: Գրքի առաջաբանում Խ. Աբովյանն ակնարկում է, որ այս ժողովածուն պատրաստել է «Վերք Յայաստանի» վեպի առաջին տարբերակը գրելուց հետո: Աբովյանը տպագրելուց առաջ երկյուղ ուներ, թե ինչպես կընդունվի աշխարհաբարով գրած իր «խեղճ գիրքը»՝ ժամանակի գրաբարագետ գիտունների կողմից: «Կարդացողը ինքն էլ լավ կիմանա, որ էս գրած բաները ավելի ուրախության համար են, Էն պատճառով բոլորը մեր խալխի խոսացած բաներն են հավաքել. թարգմանաճներս էլ՝ Էնպես են դուս բերել, որ մեր խալխի սրտովն ըլի»: Այսինքն՝ Նա գիտակցված հավաքել է մշակելով ընթերցողին է ներկայացրել ժողովրդական խոսքը՝ երագելով հասկացված լինել նրա կողմից: Գրքի վերնագիրը, իհարկե, նորություն չէր, այլ ռոմանտիզմի գրականության մեջ տարածված մի ձեւակերպում, որ առավելապես կապված էր Ջորջ Բայրոնի հետ: Նա 1807 թ. հրատարակած իր բանաստեղծական գիրքը վերագրել էր «Պարապության ժամեր», իսկ հայ բանաստեղծ Ս. Շահագիզն Աբովյանից հետո իր բանաստեղծությունների 1861 թ. ժողովածուն վերնագրել էր «Ազատության ժամեր»: Բայց Աբովյանը կարծես չի բավարարվել գրքի վերնագրով և այն ավելի մատչելի ու ընկալելի դարձնելու համար գրել է մի այլ մեկնաբանություն-վերնագիր՝ «Պարապ մարդու տանու միտք»: Ժողովրդականության ձգտման արտահայտություն է և այն, որ Խ. Աբովյանը մտերմաբար ջանացել է անմիջական ու անկեղծ հաղորդակցություն ստեղծել իր և ընթերցողի միջև ու շահել նրա վստահությունը: Ժողովածուն ունի իմաստալից առաջաբան, որը լիարժեք պատկերացում է տալիս այն գրելու հեղինակային գաղափարագեղագիտական նպատակադրման, Աբովյանի գրական ըմբռնումների և իրագործած լեզվական քաղաքականության մասին: «Շատ անգամ պարապ ժամանակս միտք էի անում, Էնպես մեկ բան գրեմ, որ մեր խալխի սրտովն ըլի, բայց չէի գիտում, թե ինչ լեզվով գրեմ: Մեր գրաբար լեզուն անգին է, նմանը

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848)

չունի, ինչքան լեզու էլ որ գիտեմ, մեկն էլ Էն համը, Էն քաղցրությունը, Էն ճոխությունը չունի. բայց մեր վատ բախտիցը հազարիցը մեկը չի հասկանում, ինչ պետք է արած: Երանի Էն սիաթին, որ մեր ազգը քիչ-քիչ կարողանա Էս կորած գանձը գտնիլ ու իր լեզուն սովորիլ, իմանալ: Բայց ո՞վ չի գիտի, որ սրան շատ ժամանակ կուզի. ու մինչեւ Էն ժամանակը մնալ, ո՞վ գիտի, մարդ սա՞ղ կմնա, թե չէ:

Էս մտածելով ուզում էի, որ գրած բանս ամեն մարդ հասկանա, ու Էնդուր համար աշխարհաբար գրեցի: Թող գիտուն մարդիքը ինձանից չնեղանան, նրանք շատ գիրք են կարդում, իրենց սիրտը մխիթարում. Ամա հասարակ մարդը մեկն էլ Էն չունի, որ Նա էլ նրանով իր պարապ վախտը՝ ժամանակն անցկացնի»:

Մեքերման ընդգծված հատվածից երևում է, որ Աբովյանը քաջ գիտակցում էր իրն հայերեն գրող լեզվի՝ գրաբարի առավելությունները: Նա հայ մարդու սրտացավությամբ մտահոգ է, որ անիմաստ է այդ լեզվով գրելը, որովհետեւ «մեր վատ բախտից» գրաբար հասկացող ու ընթերցող չկա: Ուրեմն իսկապես անհիմն ու անիմաստ են եղել Աբովյանին գրաբարի հակառակորդ և միայն աշխարհաբարի պաշտպան հռչակելու ճիգերը: Ընդհակառակը, կարող ենք վստահ ասել, որ աշխարհաբարն Աբովյանի համար վերջնականապես չի եղել, այլ թեկուզ տեւական միջանկյալ մի շրջափուլ, որում մեր ազգը կրթվելով ու գրագիտանալով՝ կկարողանա իր կորած գանձը՝ գրաբարը վերագտնել: Կրկենք նրա խոսքը՝ «Երանի Էն սիաթին, որ մեր ազգը քիչ-քիչ կարողանա Էս կորած գանձը գտնիլ ու իր լեզուն սովորիլ, իմանալ»: Բանաստեղծն անկեղծ դժգոհություն է հայտնել այն անմիտ չարախոսներից, ովքեր, իրենց չափը չճանաչելով, «հայվարա» ճամարտակում, չարախոսում էին՝ իմաստունի կեցվածք ընդունած: Այդպիսիների կանխարգելող մի զգուշացում է արել նա՝ հենց գրքի անվանաթերթին գրելով.



Ով չուզենա իր պարկի բերանը փակի, թող պառկի:

Առակների արեւելյան թեմաներն Աբովյանը վերցրել է ոչ թե անմիջաբար մուսուլմանական, այլ հայ իրականության մեջ շրջանառված, նրանց մշակված ու գրեթե հայացված ժողովրդական տարբերակներից: Այդպիսիք են «Մուլա Մասրադիդի պղինձը», «Մուլա Մասրադիդի իշի քուռակը», «Մուլա Մասրադիդի ճաշը», «Բաղդադի ճամփորդ էլը» և այլն:

Մարդկային հարաբերություններում կենսական կարեւորություն ունեցող շատ խնդիրներ է արծարծել Խ. Աբովյանը, սակայն առավելապես կենտրոնացել է հայ մարդկանց այն տեսակի վրա, որ գրաբարագետ իմաստունի կեցվածքով թերագնահատում կամ ծաղրում էին հենց ժողովրդի ճշմարիտ լուսավորության գործին անձնվիրաբար ծառայողներին: Աբովյանն ինքը հենց այս տեսակի բացառիկ մտավորական էր: Նրա ընդգրկուն հայացքը թե՛ ասիական, թե՛ եվրոպական իրականություններում որսում էր համանման երեւոյթներ, որ դառնացնում էին ժողովուրդների կյանքը, աղարտում մարդկային բնական հարաբերությունները:

Ամբողջ «Պարապ վախտի խաղալիք» գրքին որպես բնաբան կարող է ծառայել Լաֆոնտենի առակի նմանությամբ գրված հենց առաջին չափածո երկը, որ վերնագրված է «Էս գրքի ճամփի խրատը»: Այստեղ էլ Նա տալանակներ ու մտահոգություններ է արտահայտել իր գրքի ճակատագրի շուրջ և Էն հենց առաջին տողերից էլ հասկանալի է դարձրել, որ ինքն արդեն հաղթահարել է հոգեբանական արգելքները, ձեռք է բերել ինքնուրույնություն ու ինքնավստահություն և բնավ պարտավոր չէ հաշվի առնել գրաբարամուլ «ուսլալ տգետների» կործանարար կարծիքը.

Չնա՛ իմ խեղճ գիրք, Չնա՛ մարդամեջ, Գլուխդ քաշ քցի՛ր, մի՛ նեղանար հեջ, Ականջդ փակիր, սիրտդ լեն բռնի՛ր, Ինչ ասեն, խոսին, տար ու համբերի՛ր:

Առակում ներկայացված հերոսները՝ ինքնուրույնությունից զուրկ ճանապարհորդ հայրն ու որդին, ամեն գյուղով անցնելով, հլու-հնազանդ լսում են միջավայրի հակասական կարծիքները և բոլորին սիրաշահելու համար առաջնորդվում նրանցով: Բայց հեղինակն արդեն կենսափորձով համոզվել է, որ՝

Ամենի սրտին դուր գալ չի ըլիլ. Ամենի խաթըր ո՞վ կարա առնիլ, Աշխարհի բերանն ջվալի բերան:

Ամենի սրտին դուր գալ ուզելով է, որ կա՛մ հայրը, կա՛մ որդին են էշին նստում, երկուսով են էշին նստում, կա՛մ իրենք են էշը շալակում, ու վերջն էլ հայրը անեծքով, լալով՝ իր ձեռքով ջուրն է զգում էշը ու զրկվում փոխադրականից՝ քանդելով իր տուները: Կորստից հետո է Նա զգում սխալը և ուշացած զղջում.

«Ի՞նչ կըլեր՝ տանից չէիք դուրս եկել, Ո՛չ ուրշին լսել, ո՛չ մեր տունը քանդել, Ինձ տեսնողը թող իր գլուխը լա Ուրըշի դնչին հեջ մտիկ չտա»:- Ամենի խոսքին ականջ դնողը Գլուխը կկորցնի, յա էլած դուղը:

Ուրեմն՝ Աբովյանը հասել էր իր գրքի մասին տարբեր ասեկոսները, չարամիտ կարծիքներն անտեսելու և սեփական իրավացիությունը հաստատակամ պնդելու գիտակցության:

Շարունակելի
Սամվել ՄՈՐԿԱՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Սկզբը՝ թիվ 2, 4-7

Թեքեյանն իր շատ բանաստեղծություններ գրել է «ոտքի վրա» ճաշելու պես: Գրելու համար չունենալով տարրական պայմաններ՝ ապրելու հոգսը նրան շատ հաճախ է այլ աշխատանքների տարել, որոնք ոչ միայն քայքայել են նրա առողջությունը, այլև խեղել հոգեկան աշխարհը, ընդհատել ստեղծագործական թռիչքները, իսկ երբեմն էլ խթան դարձել այս կամ այն գործի ծննդան: Եվ պատահական չէ, որ տեւական պայքարների, զրկանքների ու միայնության մեջ ապրող բանաստեղծը, խտացնելով իր ու իր նմանների այդ դառը

ԱՆԴՈՒՆԴԻ ԵՎ ԵՐԿՆԹԻ ՄԵԶ ԱՌԿԱՆ ՄԻ ԿՅԱՆՔ

Նվիրվում է Վահագն Թեֆեյանի ծննդյան 140-ամյակին

վիճակը, «Տարակույս» բանաստեղծության մեջ գրել է.

Դժոխք մեր կյանքը ըրիկք, որ դուն դրախտ մը ըլլաս, Ով Հայրենիք, անդունդին եւ երկնքին մեջ առկախ:

Հոգնած ու հիասթափված լրագրության ապերախտ ասպարեզից՝ Թեքեյանն ստիպված էր մտնել մի ավելի անգրավիչ ոլորտ, որպիսին ուսուցչությունն էր: Որպես տեսուչ և լեզվի ու գրականության ուսուցիչ՝ 1934-35 ուս. տարում Թեքեյանն աշխատում է Կիպրոսի (Նիկոզիա) Մելքոնյան վարժարանում: Ո՛չ հոգեկան և ո՛չ էլ մասնագիտական առումով այն գոհացում չի տալիս. Նա իրեն համարում էր «պատահական դպրոցավար մը»: Թեքեյանը դժգոհ էր ուսման նկատմամբ աշակերտության ցուցաբերած անտարբերությունից, իր վիճակից, որ ստիպված էր «գրականութիւն սորվեցնել տոմարակալութիւն սորվեցնելու պես», մանավանդ որ Թեքեյանի շնչուղիներն ավելի ու ավելի էին տկարացել և անհնարին դարձրել ամեն օր մի քանի ժամ դասախոսելը: Ուշագրավ է, որ վարժարանի սաների անտարբերության պատճառներից մեկն էլ Թեքեյանը համարում է իրենից առաջ Հ. Օշականի դասավորությունը,

ով հայ գրականության նկատմամբ ցուցաբերել էր քննադատական դիրքորոշում ու հիասթափեցրել իր ունկնդիրներին:

1934-ի դեկտեմբերին Թեքեյանը ծանր հիվանդանում է: Նա դադարեցնում է դասավորությունը: Տարին ամուլ է եղել Նաեւ ստեղծագործական առումով: Գրելու բոլոր ցանկությունները մնում են որպես ցանկություն: Այդ օրերի մասին Նա գրում է. «... ակնաբերս սեղմելով՝ զբաղած եմ ընդդեմ տեղին, գործին և օդին...»: Եվ սա այն տարիքում, երբ Թեքեյանի խոսքերով ասած՝ «մարդ պետք է կա՛մ էական բաներ ընէ միայն, կա՛մ ոչինչ չընէ»:

1935-ի աշնանը Թեքեյանը Կիպրոսից մեկնում է և վերջնականապես հաստատվում Եգիպտոսում: Նորից է ստանձնում «Արեւի» խմբագրապետությունը, որը Ը. Շահնուրին գրած նամակում ձեւակերպում է այսպես՝ «Գաիիրե եմ, նորեն «Արեւ»-ին տակ, մեջը եւ վրան» (Էջ 394):

Ծրագրում է ամռանն այցելել Հայաստան, անգամ այն միտքն է հայտնում, որ կարող է «դառնալ կամ չդառնալ»: Թեքեյանի մեջ առաջացել էր մեծ մի վստահություն, որ Հայաստանը «լեցնելու» է Նաեւ սփյուռքահայությանը, որի մասին Նա արդեն հայտնել էր 1925-ին գրված իր «Հոն

հեռուն, ահա» բանաստեղծության մեջ.

Մենք քու զավակներդ, Սրտով սիրակեզ Ահա կուզանք քեզ...

Այդ Հայաստանում կային մարդիկ (և նրանց թիվը գնալով մեծանում էր), որ սիրում ու գնահատում էին Թեքեյանին: Եվ բնական է, որ Վահրամ Ալազանին գրած նամակում Նա բաղձանք էր հայտնում՝ իր կյանքի վերջին տարիներն ապրել «Հայրենիքին մեջ, մեռնիլ ու թաղուիլ անոր հողին տակ», բայց և գիտակցում, որ իր ցանկությունը քիչ է, պետք էր լինելու ծառայել Նաեւ իշխանություններին, մի բան, որը Թեքեյանը երբեք չէր համաձայնի, այն իշխանություններին, որոնք նրան իրենց մամուլում «բուրժուա մտավորական» էին համարում: Նորից սրվում են դեմքի և ձեռքերի մաշկի բորբոքումները, շնչառությունը ոչ մի կերպ չի կարգավորվում: 1935-ին Հայաստան այցելած Անդրանիկ Անդրեասյանը Թեքեյանին ուղարկած իր նամակի մեջ դրել էր Հայաստանում հավաքած ծաղիկներ, որի վերաբերյալ հուսալիք Թեքեյանը գրում է. «... դագաղիս վրայ դրուածի պես կը տեսնեմ զանոնք» (Էջ 400):

Շարունակությունը՝ Էջ 8

Սկզբը՝ էջ 7

1936-ին Թեքեյանի մեջ նորից է ցանկություն ծնվում «Երթալու Հայաստան, եթե ներեն նիւթական, առողջական ու հոգեկան պայմանները»: Թեքեյանը կուսակցական գործերով կարճ ժամանակով այցելում է Բեյրութ: Իր կուսակից ու մտերիմ Միհրան Տամատյանի հորդորով Բեյրութում Թեքեյանը հիմնում է խմբագրում է «Չարթոն» թերթը՝ չունենալով ո՛չ սրբագրիչ, ո՛չ գրաշար, ո՛չ թարգմանիչ եւ ո՛չ էլ ուրիշ աշխատակից: Մեկ ամիս խմբագրելուց հետո առողջության վատթարացման պատճառով Թեքեյանը մեկնում է Կահիրե, նախաձեռնում Ալեքսանդրիայում լույս ընծայել «Նոր հանդես» գրական ամսագիրը, սակայն արտոնություն չի ստանում:

Նորից է «Արեւի» «լուծը դնում իր վզին», որին ավելանում են «կուսակցական փորձանքները»՝ չստանալով հանդերձ իրեն հատկացված «սովի թոշակը», բայց պարտավորություն ունենալով աշխատել «օրական 9-էն 12 ժամ» (թերթի մյուս երկու աշխատակիցները Միք. Կյուրճյանն ու Մանսիկ Պերպեյանն էին):

Միք. Կյուրճյանին ուղղված 1937 թվականի նամակներից մեկում Թեքեյանը վկայում է, որ հազն անդադար ցնցում է կուրծքը, եւ ինքը չունի անգամ հասարակ «շերմոց մը», որ կարողալիս կամ գրելիս տաքանա: «Արեւի» համարներից մեկում տպագրում է «Խորհրդային Հայաստանի գրականության մեծ վիշտը» հոդվածը, որտեղ վրդովմունք է հայտնում Ե. Զարենցի, Ավ. Իսահակյանի, Ա. Բակունցի, Գ. Մահարու, Վ. Թոթովենցի, Մ. Արմենի եւ այլ գրողների նկատմամբ խորհրդային իշխանությունների վարած հալածանքների ու արգելքների վերաբերյալ, ցավ հայտնում, որ «... կարելի չէ իշխանութեանց սխալը իրենց երեսին տալ. պետք է, աւա՛ղ, միշտ ներում խնդրել եւ ոչ թէ արդարութիւն պահանջել» (տե՛ս «Արեւ», Գահիրե, 1937, մայիս 29, 31):

Կարճ ընկառնումից հետո՝ սկսած 1938 թ. հունիսից մինչեւ իր կյանքի վերջը, Թեքեյանը, տանելով հանդերձ գրկանքի բուրդ տանելի եւ անտանելի տեսակները (օրվա հացի խնդիր, խմբագրատան նկուղային հարկ, խառը ձեռագրերի ընթերցում եւ այլն), վարում է «Արեւի» խմբագրությունը՝ «օրը օրին» գրելով թերթի խմբագրականները, զուգահեռ խմբագրելով նաեւ «Արուեստ» թերթը: Ծրագրվող «պատլեռեան» եւ այլ հեղինակներից կատարվող թարգմանությունների ժողովածուի լույս ընծայումը չի հաջողվում: Իր վաթսուին հասած բանաստեղծը հարց պիտի տար ինքն իրեն՝ արժի՞ շարունակել ապրել:

Պիտի ապրի՞մ ես վաթսուներեւ անելի.

Պետք կա՞, պետք կա՞ ապրելու...

Երբ որ փափաքն հոգիին մեջ կը հատնի՝
Ինչո՞ւ երթալ դեռ հեռու...

«Պիտի ապրի՞մ»

ԱՆԴՈՒՆԴԻ ԵՎ ԵՐԿՆՔԻ ՄԵԶ ԱՌԿԱԽ ՄԻ ԿՅԱՆՔ

Նվիրվում է Վահագն Թեքեյանի ծննդյան 140-ամյակին

1939-ին սկսված եվրոպական պատերազմը եւ դրա հետեւանքով գրաքննադատության խստացումը, դրսից եկող թղթակցությունների սակավությունը էլ ավելի են բարդացնում «Արեւի» հրատարակումը, որի վերաբերյալ Թեքեյանը գրում է. «... ամեն առտու պարապի մը առջեւ եմ՝ զոր պետք է լեցնել»՝ թերթին հայեցի դեմք, գրական երանգ հաղորդելու եւ հետաքրքիր դարձնելու համար:

Միք. Կյուրճյանին 1940 թ. ապրիլին գրած նամակում Թեքեյանը ցավով նշում է. «... ուժս պակսած է, բայց խմբագրատուն կու գամ կոր՝ որովհետեւ պետք է գալ եւ պե՛տք է սատկիմ այս գէշ օդին, գէշ օգնականներուն եւ գէշ գործին մեջ...» (էջ 446): Իսկ հաջորդ տարվա դեկտեմբերին գրած նամակում, խոսելով իր «գէշէն գէշ» վիճակի մասին, վկայում է. «Երեկ իրիկուն երբ խմբագրատունէն ելայ՝ հինգ վայրկեան մայթին եզերքը, մուրին մեջ կեցած մնացի՝ երթալիք տեղս չգիտնալով, որքան մուր էին մտածումներս» (էջ 452): Մտածումները, իհարկե, շատ մուր էին, բայց «անժպիտ» Թեքեյանը երբեմն դիմում էր նաեւ երգիծանքի՝ իրեն ծանոթ կանանցից մեկին գրելով. «Հագս բնաւ աղէկ չէ... Կը վախնամ կոր, որ սիրտս կանգ պիտի առնէ... ոչ թէ մեկու մը, այլ ինքն իր վրայ...» (էջ 458): Իր այդ ծանր վիճակով հանդերձ՝ Թեքեյանը ձեռնարկում է հիվանդանոցում գտնվող Շ. Շահնուրին օգնության հանգանակություն կազմակերպելը:

Թեքեյանի տրամադրության շատ թեքիչ բարձրացման արտահայտություններից մեկը եղավ 1941-ից «Արեւի» համարներում «Ամենօրեայ» վերնագրով սյունյակի բացումը, որը նա անվանեց իր «երկրորդ երիտասարդության պտուղները»: Տպագրում է նաեւ իր հուշերի շարքը: Բայց վիճակի էական փոփոխություն նրան չէր սպասվում: 1943 թ. գարնանը «Արեւի» խմբագրատանը նա աղիների գալարում է ունենում, սրտի ցավեր, փոխադրվում է Կահիրեի ֆրանսիական հիվանդանոց, ուր մնում է մի քանի օր: Գրողը ստեպ-ստեպ է այցելում խմբագրատուն: Նա ավելի ապրում է «Երեկի ներկայութեամբ ընդդէմ այսօրան», թեւեւ իր մի դեռատի նամակագրի (Ֆիմի անունով - Ա. Ա.) գրում է, թե ինքը դեռ շարունակում է «փոխն ի փոխ» տառապել անցյալով, ներկայով ու ապագայով: Այս առումով Թեքեյանը երգիծական մի ուշագրավ նկատում ունի, ուր գրում է, որ Ալեքսանդրիայում գտնված ժամանակ Միք. Կյուր-



ճյանի հետ ... զգուշանում էին «անցեալին վրայ խոսելէ, ապագային վրայ չկրնալով խոսիլ եւ ներկային մեջ խոսելու արժանի բան չգտնելով...» (էջ 471): Խոսելով այս շրջանի իր կյանքի մասին՝ Թեքեյանը վկայում է. «Այն տպավորութիւնը ունիմ, թէ իմ վերջալոյսիս տարիները կ'ապրիմ՝ որոնց լոյսը եթէ պակասած՝ քաղցրութիւնը անէլացած է: Բայց ասիկա կը պարտիմ մեծ մասամբ տխրութեան, չըսելու համար տառապանքին՝ զոր երիտասարդի եւ չափահաս մարդու ալ սիրտս ապրած եւ թարգմանած է չափուած տողերով...» (էջ 471):

Օրերը գնալով ավելի ծանր էին դառնում, որին նպաստում էր նաեւ Կահիրեի դժվար տանելի տաք ու խոնավ եղանակը: Թեքեյանը սեպտեմբերին կարճ ժամանակով լինում է Ալեքսանդրիայում, որի ծովափնյա օդը կազդուրիչ դեր է ունենում նրա առողջության վրա, որի արդյունքում «շատ գէշ» չէր՝ «շատ ա՛ղէկ չըլլալով հանդերձ»: Թեքեյանը մասնակցում է արտասահմանում ապաստան գտած հայության հայապահպանմանը սատար կանգնելու նպատակով ստեղծվող «Հայ ազգային հիմնադրամի» կազմակերպման աշխատանքներին: Գրողին առաջարկվում է ստանձնել Կահիրեի հայկական վարժարանների ուսումնական խորհրդի ղեկավարումը, սակայն նա չի համաձայնում:

«Արեւի» համարներում տպագրում է իր հուշերի շարքը, ծրագրում դրանք լույս ընծայել առանձին գրքով: Այդուհանդերձ՝ Եգիպտոսի «հայկական կեանքին մթնոլորտը» «շնչելի» չի դարձնում նրա ապրած օրերը: Իրենց ազնիվ չեն պահում նաեւ Թեքեյանի որոշ բարեկամ-ընկերները: Շուտով նա ընդհարվում է «Արեւի» տնօրինության ու կուսակցության որոշ ղեկավարների հետ եւ դադարում թերթին աշխատակցելուց: Նա հեռանում է նաեւ Ռամկավար ազատական կուսակցության կեստրոնական վարչությունից: Հրանտ Նասիբյանի նյութական աջակցությամբ 1943-ին Կահիրեում լույս է տեսնում Թեքեյանի «Հայերգություն» բանաստեղծությունների ժողովածուն: Կապված կյանքի հարուցած բազում դժվարությունների հետ՝ Թեքեյանը տասը տարի գիրք լույս չէր ընծայել: Թեքեյանի 5-րդ այս գիրքը միտում է մեր ժողովրդի անցած ճանապարհի հայելին դառնալ, նրա գոյակովի, հույսի ու հավատի, կորուստների

եւ մանավանդ մարդկային ու ազգային մաքառումների արտացոլքը տալ, որը Թեքեյանը խտացնում է ժողովածուի առաջին՝ «Վասն ձեր», բանաստեղծության հետեւյալ տողերում.

...Փառքն ու արիաւիրքը անցեալի,

Ներկայի շուարումը

Ու ապագայի տեսիլքը

Ժողուեցի մաս առ մաս

Վասն ձեր եւ բազմաց...

Ժողովածուի 132 բանաստեղծություններից 44-ը չէին մտել նախորդ գրքերի մեջ, իսկ մի մասը լույս էր տեսել միայն մամուլում, կային եւ բոլորովին նոր գրված գործեր: Ժողովածուի առաջաբանում, որը վերնագրված է «Ազդ», Թեքեյանն իր գիրքը որակում է որպես «ազգային բնույթ մը» ունեցող, նաեւ թարգմանը. «... Հայ Ազգին կարճ ատենի մեջ ապրած հոգեկան աճումի եւ կորուստի, հրճուանքի եւ տառապանքի, յոյսի, ակնուստեան եւ յետոյ դարձեալ յոյսի բոլորովին անօրինակ, իրեն միայն յատուկ կեանքը ու միանգամայն կ'արտահայտէ այդ կեանքին ներշնչած, հոս արուեստ դարձած ոգին» (Թեքեյան Վ., «Հայերգություն», Գահիրե, 1943, էջ 3):

Շարունակելի

ԱՌՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Ամենայն Հայոց Կաթողիկոսը վավերացրեց Գերմանիայի հայոց թեմի առաջնորդի ընտրությունը

Ապրիլի 19-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր օրինությունն ու շնորհավորանքն է հղել Սերովբե վրդ. Իսախանյանին՝ Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ ընտրվելու կապակցությամբ:

Ընտրությունը տեղի է ունեցել Զյուլնում ապրիլի 15-ին՝ թեմական-պատգամավորական ժողովի ընթացքում:

Վավերացնելով Սերովբե վարդապետի ընտրությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթել է, որ Տերը գորակից լինի Նորընտիր առաջնորդին՝ նախանձախնդիր ծառայությամբ արդյունավորելու նրան վստահված բարձր ու պատասխանատու առաքելությունը՝ ի խնդիր Գերմանիայի հայոց թեմի ազգային ու հոգեւոր կյանքի զորացման եւ Հայոց Եկեղեցու պայծառության:

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիտասարդ Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 3.05.2018թ.

Տպագրանակ՝ 2100

Գինը՝ 50 դրամ